

## ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

### ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՊԱՐԻ ՄՇԱԿՈՒՄ. ԱՏՈՒՂԻԱՆԵՐ ԵՎ ԻՆՔՍԱԳՈՐԾՈՒԵՈՒԹՅՈՒՆ

XX դարի սկզբից մինչև 30-ական թվականները հայ պարային մշակույթը բնորոշվում է ժողովրդական պարի բեմադրական մշակման գործընթացով: Այն ծավալվում էր այդ ժամանակաշրջանում ծևավորված ստուդիական և ինքնագործ շարժումներում, որոնք հիմք հանդիսացան ժողովրդական բեմադրական պարարվեստի ծևավորման և հետագա զարգացման համար:

Տվյալ ժամանակաշրջանում արևելահայ բեմական մշակույթում ծևավորվել է ժողովրդական պարարվեստի բեմադրման երկու ուղղություն՝ ազգագրական և կովկասյան, որոնք բեմադրվել են երաժշտական ներկայացումներում:

Ուսևս XX դարի սկզբին այդ ասպարեզում զգալի ներդրում է ունեցել Հայոց ազգագրական ընկերությունը, որը Թիֆլիսում, պարահանդեսների ժամանակ ժողովրդական պարերի (Ետ ու. առաջ, Վեր-Վեր, Չամպար, Ղարսայ-պար, Թոշարի, Փափուրի և այլն) կատարումներ է կազմակերպել (աղ. I):

Այդ ավանդույթը շարունակվում է նաև հետագայում: Հայաստանում յարիրդային կարգերի հաստատումից հետո, 20-30-ական թվականներին նորովոր է սկսվում ժողովրդական սլաքի բեմականացումը, որն արտացոլվում է հատկապես պարի ուսուցման բնագավառում և նոր պայմաններում ծևավորվող ինքնագործ մշակույթում:

Արտերկրոց օրինակված պարային ոճական նոր ուղղություններին գուգահեռ, գոյատևում է նաև հայ ժողովրդական ավանդական պարը, կենցաղից տերլափոխվելով նաև բեմ:

Ժողովրդական պարի բեմականացմանը բնորոշ է երեք հիմնական ուղղություն:<sup>1</sup>

1. Ժողովրդական պարի հարմարեցումը բեմի պայմաններին, որտեղ այն ներկայացվում է անփոփոխ տարբերակներով, այնպես, ինչպես բնորոշ է ավանդական պարին և ընդունված է այն կրողների միջավայրում: Այս դեպքում միայն մասնակի փոփոխություններ են կատարվում, որոնք անխուսափելի են բեմից ցուցադրելիս: Այսինքն՝ կատարյալ, ամբողջական ժողովրդական ստեղծագործությունը ոչ թե բեմադրվում է, այլ միայն հարմարեցվում բեմի պահանջներին:<sup>2</sup>

2. Ժողովրդական պարի բեմականացման երկրորդ ուղղությունը դրա բեմադրական մշակումն է, երբ այն հիմնականում պահպանվելով որպես ժողովրդական ստեղծագործության հիմք, որոշ փոփոխությունների է ենթարկվում:

3. Հաջորդ ուղղությունը ժողովրդական պարի բեմականացումն է պրոֆեսիոնալ բեմադրողի կողմից, որը, պահպանելով ազգային ժողովրդական պարարվեստի ոճն ու ավանդույթները, գարգացնում է այն յուրովի մեկնաբանությամբ: Տվյալ դեպքում ժողովրդական պարը բեմատիկ աղբյուր է դառնում բալետմայստերական պարահորինման համար:<sup>3</sup>

<sup>1</sup> Ю. Чурко, Белорусский сценический танец, М., 1969, с. 34.

<sup>2</sup> Նման մոտեցում է եղել ինքնագործ ժողովրդական արվեստի օլիմպիադաների ժամանակ. Արք. Լիփցյանի (Հայկական ազգային պարերի խումբ 1930-ական թթ.), Է. Պետրոսյանի (Արարատի շողանի Շիրազու գյուղի պարի խումբ, 1970-ական թթ.) և Ժ. Խաչատրյանի (Ախուրյանի շրջ. Երազգավորս գլուխ Սուլ-Զարոն ինքնագործ պարի խումբ, 1970-ական թթ.) գործունեությունում:

<sup>3</sup> Р. Захаров, Слово о танце, М., 1977, с. 144.

Ավանդական պարային ֆոլկլորը ծիսական արարողակարգի բաղկացուցիչ մաս է կազմել: Դարերի ընթացքում հղկվելով՝ սյն ձեռք է բերել որոշակի կանոններ, կապված կատարման տեղի, ժամանակի, կատարողների սեղի, տարիքի և այլնի հետ:<sup>1</sup> Ավանդարար ծիսական պարերի կատարման կարգը սրբազնացվել է, ժողովուրդը ձգտել է ամեն կերպ պահպանել ավանդույթը, ազգային պարի խորհուրդը, որն առնչվում է նրա մտածելակերպի ու աշխարհայացքի հետ:

Հավանարար իին ժամանակներում, պաշտամունքային պարերին զուգահեռ, ծևավորվել են նաև աշխարհիկ պարերը, որոնց ընթերքում, կառուցվածքում և շարժական տեքստերում պահպանվել է նախնական ծիսական խորհուրդը:

Կենցաղին համապատասխան, որոշակի օրերի և որոշակի հերթականությամբ կատարված պարերին մասնակցելով, մարդիկ զգացել ու վայելել են դրանց կատարման հաճույքը, գենեցկությունն ու էությունը:

Պարի բեմականացման ժամանակ իրավիճակը կատարելապես փոխվում է. ծեսը քանդվում է, փոխվում է պարի նպատակային խորհուրդը: Բեմ բարձրանալով՝ պաըը մի փոքր հեռանում է անմիջական զգայական պայմանից, ավելի են մեծանում պարողների պարտականություններն ու պատասխանատվությունը:<sup>2</sup> Առաջ են գալիս սյլ խնդիրներ, որոնք ընորոշ չեն կենցաղային պարերին:

Հայկական ժողովրդական պարերը հիմնականում կատարվել են բաց տարածությունում, տարեկան տոնների (Աուրք Աարգիս, Տյառնընդուռած, Համբարձում, Վարդապար, Բարեկենդան և այլն) ժամանակ, ուխտավայըրում, բնակավայրերի հրապարակներում (մեյդան), տարբեր շինություններում ու հարմարեցված պարատներում:<sup>3</sup> Պարի կատարման տարած-

քը պայմանականորեն կարող ենք համարել սահմանափակ (շենք) և անսահմանափակ (բացօթյա):

Բեմում տարածքը խիստ սահմանափակվում է, կապված կատարողների քանակի, ժամանակաշափի և այլնի հետ: Սյո փոփոխություններից բացի, առաջ է գալիս հանդիսատեսի հարցը: Բեմից ցուցադրելիս՝ հանդիսատեսը փակ տարածության (որոշակի բեմական տարածք, դահլիճ) կամ որոշակի իրավիճակի սուսկ դիտորդն է:<sup>4</sup> Ժողովրդական պարերի կատարման ժամանակ, երբ տարածքը չի սահմանափակվում, հանդիսատեսը կարող է նաև մասնակից դառնալ, այսինքն՝ հանդիսատես-մասնակից սահմանը հաճախ վերանում է: Այս դեպքում պարի կատարումը կարելի է դիտել բոլոր կողմերից:

Քանի որ բեմի պայմաններում պարը կատարվում է հանդիսատեսի առջև, նրա հաճար բեմականացման փոփոխություններն այնպիսին են, որ կատարողներն անհարկի կամ երկար ժամանակ մեջքով դեպի հանդիսատեսը չմնան, որ պարը լավ դիտվի հենց նրանց կողմից:

Ժողովրդական պարը նշակելիս ծևավորումներ են արկում՝ պահպանելով նրա հիմնական կառուցվածքը:<sup>5</sup> Քանի որ ֆոլկլորային պարին բնորոշ է լասավորությունների հաճախակի կրկնությունը, որպեսզի այն բեմում միօրինակ չթվա, նույն պարածկի պահպանմամբ տարբեր անցումներ, դասավորություններ ու վերադասավորություններ են արվում:<sup>6</sup>

Ընդհանրապես հայկական պարերին բնորոշ է պարզ դասավորությունը (շրջան, կիսաշրջան, ուղիղ գիծ), որը չի փոփոխվում, քանի որ դրա զարգացումը հիմնականում կատարվում է պարաքայլերի հիման վրա: Ժողովրդական պարը ճիշտ բեմադրելու դեպքում հիմնականում պահպանվում է ավանդական դասավորությունը: Նոր, տարբեր գժերը, անցում-

<sup>1</sup> Ծրբ. Լուսացան, Старинные пляски и театральные представления армянского народа, Е., 1958, т. 1, с. 37.

<sup>2</sup> Ժ. Խաչատրյան, Մերուդական օգնություն պարի հնքագործ խմբի դեպավարներին, Եր., 1973, էջ 3:

<sup>3</sup> Ժ. Խաչատրյան, Զավախսի հայ ժողովրդական պարերը. Հայ ազգագործություն և րամակայություն (նյութեր և ուսումնասիրություններ), (այսու՝ ՀԱԲ), հ.7, Եր., 1975, էջ 16-21: & Լազարյան, Համբարամների պետություններ խորհրդային Հայաստանում, Եր., 1931, էջ 210-212:

<sup>4</sup> Г.Добровольская. Танец, пантомима, балет, Л., 1975, с. 45-47. Массовые празднества, Л., 1926, с. 190.

<sup>5</sup> И.Смирнов, Искусство балетмайстера, М., 1986, с. 157.

<sup>6</sup> N.Kilichyan, The Formation of New Elements In the Armenian folk dance style (research paper). The 19th Symposium of the ICTM Study Group on Ethnochoreology, Trest, Czech Republic, 1996, p. 10.

Աերը, դասավորություններն ու վերադասավորությունները իյուսվում են հայ ազգային պարաֆոնդին հարազատ կառուցվածքի շուրջ:<sup>1</sup>

Ժողովրդական պարուն պարաձևերն իրենց իխստ սահմանված հերթականությունն ունեն, որոնք բենու հաճախ խախուվում են: Այդ իսկ պատճառով, ժողովրդական պարը մշակելու, մի պարից մյուսին անցնելու ուամար, սահուն, գեղարվեստական անցումներ են հորինվում:

Պարերի ժողովրդական կատարողները ավանդականին բնրոշ ոչ երաժշտական ընդմիջումներ ու բացականչություններ են անում, որոնք էլ հենց հաստատում են ժողովրդական ստեղծագործության հանկարծահնար (իմպրովիզացիոն) բնույթն ու բնական կատարումը և ոչ բեմականացումը:<sup>2</sup>

Բեմում սահմանափակվում է պարի կատարման տևողությունը, ոբը ժողովրդական պարի դեպքում շարունակվում է հիմնականում գուռնաչու ու պարագլխի կամ պարողների ցանկությամբ: Բեմադրկան պարն ունի որոշակի ժամանակաշափ (հարոնոմետրած), որը տևում է 3-10 րոպեից ոչ ավելի, կապված պարի ժամրի հետ:

Բևմականացնելիս պահպանվում է ստեղծագործության դրամատուրգիական կառուցվածքը (նախաբան, սկիզբ, գարգացում, գագաթնակետ, վերջաբան):<sup>3</sup> Ժողովրդական պարը ևս ունի դրամատուրգիական կառուցվածք, սակայն այն բեմակացնելիս հորինվում է հատուկ մուտք-նախաբան և շեշտված վերջաբան: Ի տարբերություն ժողովրդական կատարման, այն չի կարող սկսվել ու ավարտվել պարի դեկավարի, պարագլխի կամ նվազողների ցանկությամբ: Բեմական պարի կառուցվածքային, զգացմունքային և գաղափարական գարգացումը տանում է դեպի ընդգծված վերջաբանը:<sup>4</sup>

<sup>1</sup> Т.Устинова, Русский народный танец. М., 1986, с. 157

<sup>2</sup> Л.Шамина, Проблема сценической передачи импревизационной природы народно-хореографического искусства, Народный танец, С.-П., 1991 с. 138-145.

<sup>3</sup> Р.Захаров, Образ современника в танце, М., 1984, с. 11.

<sup>4</sup> Ժողովրդական բեմադրկան պարարվեստում մշակվել են բնորոշ վերջաբաններ: Արագ տեմպով պարի ավարտը որևէ պարային դիրքում՝ բացականչությամբ և պա-

Յայ ժողովրդական խմբական պարերում չկա կերպարը ընդգծված անհատականացում (կա պարագուիս, պարի պոչ): Դա բոլորի միասնական կատարումն է, խորհրդանշելով ժողովրդի հավաքական կերպարը: Խոկ բեմականացված պարը, որպես կանոն, հենվում է վառ անհատականացված կերպարների ծևավորման վրա. որոնք ենթարկվում են բեմական գործողության տրամաբանությանը:<sup>5</sup> Բեմադրական պարը կարելի է համարել հեղինակային, իսկ ժողովրդական խմբականը՝ ավանդական:

Բեմականացնելիս կամ բեմական մշակման ենթարկելիս, բնականաբար փոփոխության է ենթարկվում ոչ միայն ժողովրդական պարերի շարժական, այլև երաժշտական տեքստը:<sup>6</sup> Ժողովրդական պարի յուրաքանչյուր երաժշտական ֆրագին համապատասխանում է պարաձևի որոշակի քայլ: Երբեմն դիտվում է երաժշտական ֆրագի և պարաձևի անհամապատասխանություն: Պատահում է, որ կատարման ընթացքում երաժշտական ֆրագի կեսից, նոր պարաքայլի անցնելով, փոխվում է պարային քայլը: Այնուհետև պարաքայլը մի քանի անգամ կրկնվելուց հետո է, որ պարաձևն ու երաժշատությունը համընկնում են:<sup>7</sup>

Դասական պարի ազդեցությամբ և բեմադրական մշակմանը ժողովրդական բեմադրական պարում վերանում է երաժշտական տակտի և պարաքայլի անհամապատասխանությունը և յուրաքանչյուր երաժշտական տակտին որոշակի պարաձև է կատարվում: Ժողովրդական պարն անընդհատ կրկնվում է և միօրինակությունից ու միապաղաղությունից խուսափելու նպատակով, նվազողները, պահպանելով ոիթմը, հաճախ փոխում են եղանակը, իսկ պարողները շարունակում են նույն պարաքայլերը:

Ռելիվ՝ հանդիսատեսին հրաժեշտ տալով՝ բեմից հեռանալով:

<sup>5</sup> Е.Луцкая, Жизнь и танец, М., 1968, с. 8. Т.Устинова, Беречь красоту русского танца, М., 1958, с.22.

<sup>6</sup> Կ.Սելիք-Վրթանեսյան, Ս.Տոնյան. Երաժշտական բացատրական բառարան, Եր., 1939, էջ 109:

<sup>7</sup> Այդ երևույթը բնորոշ է նաև բուլղարական ժողովրդական պարերին: Տես՝ Р.Каџарова-Кукудова, К. Джекеев, Болгарские народные танцы, София, 1958, с. 23-24.

Յայկական ժողովրդական պարերին բնորշ են 6/8, 3/8, 2/4, 6/4 երաժշտական չափերը: Մեղեղիմերը կարող են կազմված լինել մեկ (պարզ ձև) կամ 2-3 ֆրագից (բարդ ձև):<sup>1</sup> Առվորաքար, խմբական դանդաղ պարերի մեջնորդները մեկ մաս են ունենում: Դրանք սկսվում են դանդաղ տեմպով: աստիճանաբար զարգանալով՝ արագանում, որի ժամանակ հաճախ փոխվում է ոչ միայն շարժումների տեմպը, այլև բարդությունը:<sup>2</sup> Երկմասանի մեղեղի ունեցող խմբական պարերն ավարտվում են արագ տեմպով: Ժողովրդական կատարման ժամանակ պարի արագ մասում սովորաբար կանայք դուրս են գալիս, իսկ տղանարդիկ շարունակում են պարել: Բեմադրկան պարի ժամանակ կանայք մնում են բեմում, ետին պահանում՝ տեղում կատարվող տարբեր պարային շարժումներով կամ ծափերով ուղեկցելով տղանարդկանց պարերը:

Կանանց պարերին ավելի բնորշ է միջին տեմպը և քնարական մոտիվը:<sup>3</sup>

Մեղեղու և պարի եռամաս կառուցվածքը հանրիպում է հիմնականում մենապարերում:

Ժողովրդական պարի բեմականացումը պահպանից տարբերվում է նաև նրանով, որ կորցնում է մի այնպիսի բնորշ գիծ, ինչպիսին է ժողովրդական ֆոլկլորի ինպրովրօգիոն սկզբունքը:<sup>4</sup> Բեմադրկան պարը սահմասահմանափակում է ոչ միայն կատարողների (պարագլուխ, պարի պոչ), այլև երաժիշտների իմպրովրօգացիան, որոնք հանդես են գալիս որոշակի մշակված պարտիտուրայով:

Ժողովրդական պարերի բեմականացման դեպքում սահմանափակվում է նաև կատարողների թիվը: Ըստ կատարողների թվի՝ հայկական ժողովրդական պարերը լինում են մասսայական, խմբական, գույզ և կենտ պարերի մշակումները: Մասսայական պարերի բեմականացումը դժվար է՝ կապված բեմի չափերի, հնարավորությունների, բեմադրության բնույթի, պարաստեղծի մտահղացման և այլ հանգամանքների հետ: Լավագույնս սարքավորված, ընդարձակ բեմերում անգամ ազգային ժողովրդական պարին 24 կատարողից ավելին չի մասնակցում: Բեմն ավելորդ ծանրաբեռնվածություն չի ընդունում, քանի որ մասնակիցների մեջ քանակությունը նվազեցնում է պարային բեմադրության գեղագիտական ընկալման հնարավորությունը:<sup>5</sup>

Մասսայական պարերին կարող էին մասնակցել անսահմանափակ քանակությամբ մարդիկ: Դամաժողովրդական տոնախմբությունների ժամանակ պարերին մասնակցում էր գորեթե ողջ գուուը:

Մասնակիցների թիվը կարող էր կոճատվել՝ կապված պարի շարժումների բարդության հետ: Այդ իսկ պատճառով պարզ պարագայլերով դանդաղ պարերին՝ գովոնդներին, մասնակցել են շատերը, իսկ արագ, բարդ շարժումներով թռիչքածն պարերին՝ միայն 10, 15, 20 մարդուց բաղկացած որոշակի խմբեր:<sup>6</sup>

Յայկական ժողովրդական բեմադրական պարերում պահպանվում են նաև խմբական, գույզ և կենտ պարերի մշակումները: Մասսայական պարերի բեմականացումը դժվար է՝ կապված բեմի չափերի, հնարավորությունների, բեմադրության բնույթի, պարաստեղծի մտահղացման և այլ հանգամանքների հետ: Լավագույնս սարքավորված, ընդարձակ բեմերում անգամ ազգային ժողովրդական պարին 24 կատարողից ավելին չի մասնակցում: Բեմն ավելորդ ծանրաբեռնվածություն չի ընդունում, քանի որ մասնակիցների մեջ քանակությունը նվազեցնում է պարային բեմադրության գեղագիտական ընկալման հնարավորությունը:<sup>7</sup>

Քանի որ մասսայական կամ խմբական պարը միասնական կատարում է, դեռ վաղ ժամանակներից ընդունված է եղել այն կատարելության հասցնելու նպատակով, որոշակի շարժումների բարդությունը հաղթահարել հատուկ փորձերի միջոցով:<sup>8</sup>

Պարերի ուսուցումը կարևոր ու նպատակային է եղել ոչ միայն մեծահասակների, այլև երեխաների համար, որպես նրանց դաստիարակության, մարմնակիթության<sup>9</sup> և սոցիալականացման միջոց:

<sup>1</sup> Է.Պետրոսյան, Ջ.Խաչատրյան, Արմենական ժողովրդական պարերի հանուն, Մ., 1980, ս. 26.

<sup>2</sup> Ռ.Առայան, Արմենական ժողովրդական պարերի հանուն, Մ., 1965, ս. 31-33.

<sup>3</sup> Յայկական պարեր, փոխադր. Ե. Բաղդասարյանի, Եր., Եր., 1974, էջ 5-10:

<sup>4</sup> Պ.Բոգատյան, Տрадиция и импровизация в народном творчестве, Մ., 1964, с. 1-7.

<sup>5</sup> Հրեական ժողովրդական պարերի հանուն, Մ., 1965, ս. 49.

<sup>6</sup> Դա չի վերաբերվում մասսայական պարերին, որոնք կատարվում են իրապարակներում, մարզադաշտներում և այլուր:

<sup>7</sup> Հրեական ժողովրդական պարերի հանուն, Մ., 1965, ս. 50:

<sup>8</sup> Կ.Վրոյան, Ֆարանդական կուլտուրայի և սպորտի հնագույն ակունքները Յայկականացման, Եր., 1935, էջ 362:

ու յուրացրել են ավանդական պահպաժի նորմերը:<sup>1</sup>

Դայ հասարակության մեջ ընդունված է եղել վատ պարողներին հանել պարաշրջանից, իսկ լավ պարողները, այդ հատկանիշի համար, հասարակության հարգի անդամներ են համարվել:<sup>2</sup>

Բեմադրկան պարի կատարմանը նախապատրաստվելիս նույնպես հատուկ փորձեր են կատարվություն: Նախօրոք վարժվածությունն այստեղ բերում է իսնբական պարի համաչափ, միաժամանակյա (սինիրոն) կատարնանը, ոճական միանմանությանը և ինքնատիպ ստեղծագործական ծեռագրի ծեռօքերմանը, որը բեմական պարի որակական կողմերից է:<sup>3</sup>

Ի տարբերություն ժողովրդականի, բեմադրական պարուն նշանակություն է տրվում կատարողների հասակի հանաչափությանը և արտաքին տեսքին:

Ժողովրդական բեմադրական պարերուն մշակվում և փոփոխությունների է ենթակառվում նաև ազգային ավանդական տարագը: Ի տարբերություն ժողովրդականի, բեմադրական պարեր կատարողները կրում են միատևակ տարագ: Այստեղ կարևոր է ավանդականի և նորի ներդաշնակությունը, ազգային գուներանգների և գարդանահիշերի համադրությունը:<sup>4</sup>

Հաշվի առնելով բեմի լուսավորությունը, հեռավորությունը հանդիսատեսից, տարագների ծանավորման ժամանակ օգտագործվում են ավելի վառ գույներ և ընդգծված գարդանահիշեր: Բացի այդ, ի տարբերություն ժողովրդականի, բեմադրկան տարագը լինում է ավելի թեթև, հարմար բեմադրվող պարին: Այն ընդգծում է պարողների շարժումները, դիրքերը, բայետմայստերի ստեղծագործական մտահ-

ղացումը: Այդ պատճառով բեմական հագուստը ծանավորելիս հաճախ իսաթարվում են ազգային տարագի ծևն ու դմաստաբանությունը:<sup>5</sup>

Ազգային պարը, երաժշտությունն ու տարրագը բեմադրական պարում պետք է մշակվեն իրենց ամրողականությամբ: Միայն այդ դեպքում կստեղծվի արտահայտիչ գեղարվեստական ստեղծագործություն: Այստեղ կարևորվում է նաև մասնագետ նկարիչ-ազգագրագետի դերը:<sup>6</sup>

Վերը թվարկված փոփոխությունները, որոնք անխուսափելի են ժողովրդական պարի բեմադրական մշակումներում, բնորոշ են ստուդիական շարժմանը և ժողովրդական բեմադրական պարարվեստի հետագա փուլերին:

### Ստուդիական շարժումը Դայաստանում

Խորհրդային կարգերի առաջին տարիներին երկրում ծավալվեց գեղարվեստական ստեղծագործության վերելքի մի նոր ալիք: Դա ստուդիական շարժումն էր: Ստուդիաներ բացվեցին Սովորական, Պետրոգրադում, Կիևում, Օդեսայում, Խարկովում, Յալթայում, Բաթումում, Թիֆլիսում, Երևանում, Լենինականում և այլուր: Միայն Մոսկվայում գործել են երաժշտական, թատերական,<sup>7</sup> օպերային և պարային տասնինգ ստուդիաներ, որոնք ունեցել են ուսուցողական բնույթ և գեղագիտական պահանջնունք բավարարելու գործառույթ: Ընդորում, ստուդիաները նույնպես տարբեր էին՝ ոիթմի և պլաստիկայի, բալետային, սալոնային, եվրոպական կամ ասիական պարերի:

Պլաստիկ պարի մոսկովյան ստուդիաները ղեկավարում էին Ֆրանցեսկա Բեատան, Ի. Չերնեցկայան, Լ. Ալեքսեևան, Վ. Ցվետաևան, Վ. Մայան: Այդ պարային ստուդիաները հիմնականում գործում էին ըստ ժակ-Դալկրոգի<sup>8</sup>

<sup>1</sup> Н.Киличян, Социализация детей посредством обучения танцевального фольклора, (Доклад на 6-ой Европейской конференции фольклорного творчества), Минск, 1997, с. 20.

<sup>2</sup> Ж.Хачатрян, Армянские народные пляски Джавахка, Автoreферат диссертации на соискание ученой степени кандидата исторических наук, Е., 1971, с. 4.

<sup>3</sup> Ю.Чурко, նշվ. աշխ., էջ 23:

<sup>4</sup> Ն.Ավագյան, Երգի-սարու անսամբլների զգեստավորման հարցերից, ժողովրդական երաժշտական ստեղծագործությանը նվիրված գիտական նստաշրջանի թեզեր, Եր., 1987, էջ 21-22:

<sup>5</sup> Է.Պետրոսյան, Ուր է գնում մեր պարարվեստը. Սովետական արվեստ, 1968, 8, էջ 28-31:

<sup>6</sup> Ա.Պատրիկ, Դայկական տարագ, Եր., 1983, էջ 154-166:

<sup>7</sup> Բ.Դալկրոզը:

<sup>8</sup> Է.Суրից, Ջակ-Далькроэз Эмиль (1865-1950), швейцарский музыкант и педагог. Основал в Геллерупе (Саксония) школу, где учились М. Вигман, М. Рамбер

և Ղելսարաի համակարգերի, իսկ մի փոքր ավելի ուշ՝ ամերիկյան պարուիի Այսեղորա Դունկանի «ազատ պարի» սկզբունքների:

Ժակ-Դալկրոզն ուսումնասիրել է երաժշտական ռիթմի ազդեցությունը մարդու հոգեբանության վոա: Նրա առաջարկած վարժանքի համակարգը նպաստում էր րացարձակ լսության զարգացմանը, երաժշտական և պլաստիկ հորինվածքներ և հմապրովհացիաներ կատարելու ընդունակության ձեռքբերմանը:<sup>1</sup> Ռիթմիկ մարմնամարզության նրա համակարգի հիմնական դրույթները ենտևայաներն են՝ ամեն մի ռիթմ շարժում է, ամեն մի շարժում՝ մատերիա: Ամեն մի շարժում ընթանում է ժամանակի և տարածության մեջ, որոնք լի են մասսաւորական և ենթարկվում են հավերժական ռիթմի օրենքին: Փոքր երեխաների շարժումները բացարձակապես մարմնական են, ինչոր չափով բնագրային ու չափակցված, և մեր գիտակցությունը ձևավորվում է ֆիզիկական փորձի հիման վոա: Մտավոր ընկալումների պարզությունը ձեռք է բերվում ֆիզիկական միջոցներով և որպեսզի մարդու շարժումները կարգավորված լինեն, նրա մեջ պետք է դաստիարակել ռիթմի զգացողությունը:<sup>2</sup>

Ֆ. Ղելսարտն առաջինն էր, որ գիտականորեն ռիթմնավորեց մարդու մարմնի շարժումների բնույթն ու եռթյունը՝ յուրաքանչյուրին տալով որոշակի անվանում: Իր ուսմունքում նա ծգում էր րացատրել, թե ինչպես է շարժումը նյութ հանդիսանում գեղարվեստական կերպարի ստեղծման համար:<sup>3</sup> Նրա տեսությունն առավել լայն տարածում է ունեցել ԱՍՆ-ում՝ ազդելով շարժման ու պարի ուսուցիչների մի քանի սերունդների գործունեության վոա:<sup>4</sup>

Այսեղորա Դունկանի<sup>5</sup> գործունեությունը խիստ ընդգծված ազդեցություն է ունեցել ռիթմա-

պլաստիկ ստուդիաների ծրագրերի վոա, որտեղ հիմնականում ադրիկներ էրն ընդգրկված: Տղաների մասնակցությունը հազվադեպ էր, հատկապես ստուդիական շարժման սկզբնական շրջանում, իսկ ավելի ուշ՝ երկրորդական: Դունկանի ոճով ընթացող ռիթմապլաստիկ ստուդիաների ծրագրերին բնորոշ էր «ազատ պարի» սկզբունքը, ըստ որի մարմնի շարժումները ներքին մղումի արտահայտություն են,<sup>6</sup> հորինվածքների բեմադրումն ու հագուստի ձևավորումը (հունական պարեզոտ, ոտարարիկ):<sup>7</sup> Ա. Դունկանի գործունեության բուն նպատակը պլաստիկ, ազատ պարի պրոպագանդումն էր, գերծ դասական կանոններից:

XX դարի սկզբը թիֆլիսյան ստուդիաներից մի քանիսը նշանավորվում են հայագի բալետմայստերների և պարողների գործունեությամբ, որոնք հետագայում զգալի ներդրում ունեցան հայ պարային մշակույթի զարգացման ասպարեզում (Արք. Լիսիցյան, Վ. Արիստակեսյան, Ի. Արրատով (Ե. Յաղուրյան), Բ. Օրդոյան):

Վրաստանի դասական պարի առաջըն ստուդիան, որը լիեկավարում էր ազգությամբ իտալուհի, պարուիի Ս. Ի. Պերինին,<sup>8</sup> ամուսնու՝ Ա. Ֆ. Խոչենցիի հետ, գործել է 1916 թվականից: 1920թ. այն վերափոխվել է Զ. Պալիաշվիլու անվան օպերայի և բալետի թատրոնին կից դասական պարի դպրոցի և որպես դպրոցստուդիա գոյատևել մինչև 1937թ.: Այդ ստուդիան ուշադրության է արժանի նրանով, որ պատրաստել է այնախսի հայտնի արվեստագետներ, ինչպիսիք են Վ.Ս. Չարուկիանին, Ն.Ը. Ռամիշվիլին, Ի.Ի. Սոլիսիշվիլին, Ե.Գ. Չիկվահիձեն, Ե.Լ. Գվարամաձեն, Ի.Ա. Արրատովը, Վ.Ա. Արիստակեսյանը, Մ.Վ. Բառերը,

<sup>6</sup> Հ. Ռուսլան Դյունկան Այսեդորա, ԲЭ, М., 1951, с. 196.

<sup>7</sup> Հ. Շերեմետյան Տանեց նա էստրադե, Մ., 1985, с. 41. Հ. Ինոզեմցևա, Է. Բոչարնիկով, Տեմ, ու լիս լիս բալետ, Մ., 1988, с. 14.

<sup>8</sup> Ա. Կհերանձե, Մ. Պերինի, ԲЭ, М., 1981, с. 395.

и др. представители ритмопластического танца, Все о балете (словарь-справочник), М., 1966.

<sup>1</sup> Л. Мухаринская, Жак-Далькроз, Балетная энциклопедия (այսուհետեւ ԲՅ), М., 1981, с. 203.

<sup>2</sup> Жак-Далькроз, Ритм, СПб, 1907, с. 27.

<sup>3</sup> Г. Комаров, Дельсарт Франсуа, БЭ, М., 1981, с. 181.

<sup>4</sup> Այդ համակարգով են աշխատել Արք. և Լ. Պարարագանելուանների Ռիթմ և պլաստիկայի ինստիտուտում:

<sup>5</sup> Е. Суриц, Дункан Айседора, Все о балете (словарь-справочник), М., 1966.

**Ա.Ն. Աերգենը (Սարգսյան),<sup>1</sup> Ս.Բ. Վիրսալաձեն  
և ուրիշներ:**

Այս արվեստագետները նույն դպրոցում  
կրթվելով, կայուն տեղ գրավեցին վրացական  
և հայկական բալետային ու ժողովրդական  
քննադրական պարարվեստում:

Ի. Սուլիսիշվիլին և Ն. Ռամիշվիլին դարձան  
Վրաստանի պարի պետական անսանքլի հիմ-  
նադիրները: Վ. Չարուկիանին, Ե. Չիկվահիձեն,  
Ե. Գվարանաձեն, Ի. Ալեքսիձեն և Ս. Բաուերը  
անկրկնելի բեմական կերպարներ ստեղծեցին  
վրաց բալետային արվեստում:<sup>2</sup> Ա. Վրոնսկին  
և Ս. Մերգենը դարձան հայտնի բալետմայս-  
տերներ: Վերջինս զգալի ներդրում է ունեցել  
նաև ուկրաինական ազգային բալետի ծևա-  
վորման գործում՝ փորձելով համադրել դա-  
սական բալետը և ուկրաինական ժողովրդա-  
կան պարը (Վ. Իոյրիշ, «Սատանայական գի-  
շեր», Կիև, 1943թ.):<sup>3</sup>

Նկարիչ Ա. Վիրսալաձեն միակն է թվարկ-  
վածներից, որ բալետմայստեր կամ պարող չի  
դարձել: Այնուամենայնիվ, թատրոնական նկար-  
չի նրա արվեստն անբաժան է եղել պարար-  
վեստից: Մոսկվայի Մեծ թատրոնի զիյավոր  
ռայլետմայստեր Յու. Գրիգարովիչի բոլոր ներ-  
կայացումների ծևավորումները Ա. Վիրսալա-  
ձեինն են, որոնք նրա գործունեության պահեն  
և կազմում:<sup>4</sup>

Դայագի բալետմայստերներ Վ. Արխատ-  
կեսյանը և Ի. Արբատովը մեծ ներդրում ունեն  
հայ պարարվեստի բնագավառում: Սոազինը  
հիմնադիրը դարձավ հայ ժողովրդական բե-  
մադրական պարարվեստի, երկրորդը նշանա-  
վորվեց թե ժողովրդական բեմադրական պա-  
րարվեստում, թե բալետում, և թե որպես  
շնորհալի թատերական նկարիչ:<sup>5</sup> Ի. Արբա-  
տովը բազմաբնույթ գործունեություն է ունե-  
ցել. նա ստեղծագործել է Անդրկովկասում,  
Սիցին Ասիայում, Ուկրաինայում՝ ամենուրեք

բեմադրելով ազգային պարեր և բալետային  
ներկայացումներ (Կարապի լիճը, Արլեկինա-  
դա. Բախչիսարայի շատրվանը, Երջանկու-  
թյուն, Խանդութ, Սարմար, Սևան և այլն): Նա  
բազմաթիվ պարեր է բեմականացրել օպերա-  
ներում, եստրադայում, կինոյում, դնքնագործ  
և գինվորական պարային անսամբլներում:<sup>6</sup> Ի.  
Ի. Արբատովի շատ բեմադրություններ մտան  
հայկական բեմադրական պարերի ցանկը որ-  
պես դրանց դասական նմուշներ (Կախարդ-  
ված Ժաղիկներ, <sup>7</sup> Զուռնի տրնգի, Յու նազան,  
Ջերանի և այլն):<sup>8</sup>

XX դարի սկզբին Թիֆլիսում գործել է նաև  
պրոֆեսոր Գ. Եթարյանի պարի ստուդիան:<sup>9</sup>  
որտեղ ազգային պարեր է դասավանդել Վ.  
Արխատակեսյանը. Կովկասյան պարերի ստու-  
դիան (Վարիչ և պարուսուց Վ. Արխատակես-  
յան), Վրաստանի Լուսժողկոմատին կից պար-  
արվեստի թիվ 2 ստուդիան<sup>10</sup> (ղեկ. Ի. Արբա-  
տով և Կ. Չիկվածե) և Արտասանության, ոիթմի  
և պլաստիկայի ստուդիան (ղեկ. Սրբ. Լիսի-  
ցյան), որը հետագայում վերակազմավորվում է  
Ոիթմի ու պլաստիկայի ինստիտուտի:<sup>11</sup>

Ստուդիական շարժումն ուրույն ծավալում  
է ստանում նաև Դայաստանում: Տեղի մասնա-  
գետներից բացի, Թիֆլիսից հրավիրվում են  
Վ. Արխատակեսյանը, ավելի ուշ՝ Ս. Դուրինյա-  
նը, Սրբ. Լիսիցյանը, որոնք Երևանում շարու-  
նակում են նման ստուդիաների ստեղծագոր-  
ծական ավանդույթները: 1921թ. ղեկտեմբերի  
22-ին Երևանում բացվում է Երաժշտական  
ստուդիա (ղեկ. Ռ. Անդրեյան), որը Լուսժող-  
կոմի 1923թ. հուլիսի 13-ի որոշմամբ, վերա-

<sup>1</sup> Հ. Սարգսյան, Վաերամ Արխատակեսյան, Եր., 1979. էջ 5:

<sup>2</sup> Կ. Էլլյաշ, Բալետ հարուստ ՀՀ, Երևան, 1977. էջ 44-45.

<sup>3</sup> Դ. Գլյան, Որն է սպասարկ բարորդ, Եր., 1970:

<sup>4</sup> Վ. Վանցլու, Բալետ Գրիգորովիչ և պրեմիեր խօսքագրություն, Երևան, 1968. էջ 181.

<sup>5</sup> Ի. Արբատովի պարային հագուստների էսթիգների բնօրինակները հնագիտության և ազգագործության հնս-  
տիտուտին (այսու՝ ԴԱԻ) է նվիրել բալետմայստեր Ե. Սանուկյանը (1989թ.):

<sup>6</sup> Վ. Կարսյան. Դевяносто лет со дня рождения народ-  
ного артиста Арм. ССР И. Арбатова. Советский ба-  
лет, 1984, № 4, с. 42-43.

<sup>7</sup> Ա. Կիլիկյան. Կախարդական ծաղկմեր պարը (թեմ. Ի. Արբատովի) «Արմեններ» պարային համուրի կատար-  
մանը 4. Սունդուկյանի ամվան բատրոնի թեմուն, 28.02.  
1995թ. (ղեկ. ղեկ. Լ. Բուլղարյան). ԴԱԻ. Պարարվե-  
ստի արխիվ:

<sup>8</sup> Տ. Տկաченկո. Նարոդныи танец, М., с. 521-525.

<sup>9</sup> Հ. Սարգսյան. Անշարժ աշխատ, էջ 5:

<sup>10</sup> Ծ. Ջամբարձումյան. Օրդոյան եղբայրներ, Եր., 1979,  
էջ 13:

<sup>11</sup> Հրեա Արքայական թագավորության պարագաների պահպան, Երևան, 1939. էջ 16., էջ 17. Սրբ. Լիսիցյան արխիվ:

կազմավորվում է Պետական կոմսերվատորիայի:<sup>1</sup>

1924թ. հուլիսի 11-ին Լենինականում բացվում է երաժշտական ստուդիա,<sup>2</sup> որի նախաձեռնողներից էր ԽՍՀԱ ժողովրդական դերասան, դիրիժոր Ա. Մելիք-Փաշայանը: 1923թ. հոկտեմբերի 25-ից Լենինականում գործում է օպերա-օպերետային դերասանական խումբը<sup>3</sup> բը<sup>3</sup> (ղեկ. Շ. Տայան) և երաժշտական ստուդիան, որի բացումը քաղաքի մշակութային կյանքի այդ տարիների հերթական նվաճումներից էր:

Երևանում ստուդիական շարժման օջախներից էր 1924թ. մարտի 4-ին բացված Ռիթմի և պլաստիկայի ստուդիան,<sup>4</sup> որը դեկավարել է կոնսերվատորիայի դասախոս Վ. Ա. Ավետիկովը: Ստուդիան ուսուցողական գործունեության հետ մեկտեղ կազմակերպել է ցուցադրական երեկոներ և պարահանդեսներ, որտեղ կատարվել են եվրոպական և արևելյան պարեր:<sup>5</sup> Ստուդիայում գործել է երկու տարիքային խումբ՝ մանկական և պատանեկան: Նվագակցել են լարային նվագախումբը և դաշնակահարը: Ասուուդիայի ծրագիրը եղել է բազմաբնույթ, կապված նմանատիպ հաստատվությունների հանրամատչելիության և ուսուցողական, դասահարակչական նպատակներ ունենալու հետ: Ուսուցանվել են և մարմնամարզական, և ոճավորված ռիթմապլաստիկ վարժություններ՝ դրույան «ազատ պարի» սկզբունքներով («Պունական ֆանտազիա, Դիմն արկին, Կալեյդոսկոպ կամ Շարժվող շրջան, Կրակի պարը և այլն»): Եղել են նաև քաղաքական թեմաներով բեմադրություններ (Մարսելյոզ, Ապօֆենզ, Ռազմական կանչ), որոնք ստուդիայի ծրագրում անվանվել են Դեղափսխական էտյուդներ (Տիրովան

պար, Կրակովյան պար, Տորեադոր և այլն): Ծրագրի բազմազանությունն ապահովելու համար այն լրացրել են ժողովրդական պարերով: Դրանք դասական պարարվեստի նմուշներ են և անվանվում են նաև բնորոշ պարեր (խարակութեան):<sup>6</sup>

Դասական պարի զարգացմանը զուգահեռ, բալետային ներկայացումներում միշտ էլ տեղ են զտել բազմաթիվ սյուժետային պարեր, որոնք պահանջում էին գործող անձանց կերպարային բնորոշումներ: Դրանք կարող էին լինել կատակերգական, գրոտեսկային կամ այլ բնույթի տեսարաններ, որոնք հաճախ ժողովրդական պարի արտահայտչամիջոցներով ստանում էին բեմական լուծում: Տարբեր դարաշրջանների բալետային արվեստում տարբեր են եղել նաև մոտեցումները բնորոշ պարերի նկատմամբ: Իրականում այդ ժամրը դասական և ժողովրդական պարի ուրույն սինթեզ է սահմանական պարի շրջանակներում: Այս ուղղությունը հարուստ է եղել տարբեր մոտեցումներով և մեկնարանություններով, բալետային ներկայացման մեջ ժողովրդական պարի տեղի, դերի, մշակվածության նկատմամբ ամենատարբեր կարծիքներով:

Դեռևս Ժ. Ժորժ Նովերը՝ XVIII դարի դասական պարի հայտնի ռեֆորմատորը, կարևորել է ազգային պարի դերը դասական պարի հարստացման գործում: Իր «Նամակներ»-ում բարձրացված բազմաթիվ լուրջ հարցադրումների շարքում, նա կոչ էր անում շարունակել նաև պարի տեխնիկայի լրացումը ժողովրդականի տարբերությունը:<sup>7</sup>

Բալետային թատրոնների հետագա գործունեությունը համոզի կերպով ցույց է տալիս ներկայացումներում ժողովրդական պարերի ներմուծումը:

Ազգային պարեր էին բեմադրվում նաև կոմեդիաներում, ողևիլներում, մելոդրամաներում և օպերաներում (Լեզգինկա, Արևելյան պարեր՝ Մ. Գլինկայի «Ռուսան և Լյուդմիլա» և

<sup>1</sup> Մ. Մուրադյան, Արմանսկայա սովորության կուլտուրա, Ե., 1957, ս. 13.

<sup>2</sup> Կ. Սեղմուսան. Արևելյան սովորության ավանդույթները և դրանց արտահայտությունները լենինականցիների կենցաղում, ԴԱԲ, Եր., 1974, հ. 6, էջ 239:

<sup>3</sup> Ռ. Մազմանյան, Առևելյան երաժշտական կյանքի տարեգործություն, Եր., 1979, էջ 27:

<sup>4</sup> «Հայութարարություն», 4.3.1924, 77 Պատմության կենտրոնական պետական արխիվ (այսու՝ ՊԿՊ), ֆ. 122, գ. 1, գ. 763, էջ 52:

<sup>5</sup> «Ցուցադրական երեկոյի ծրագիր», 30.5.1924, 77 ՊԿՊ, ֆ. 122, գ. 1, գ. 768, էջ 91:

<sup>6</sup> Ա. Լոլուխօս, Ա. Շիրյաև, Ա. Բոչարօս, Օսновы характерного танца, Л.-М., 1939, с. 125.

<sup>7</sup> Ջ. Հ. Նովեր, Պисьма о танце и балетах, Л.-М., 1965, с. 195-198.

Լեհական պարեր՝ «հվան Սուսանին» օպերաներում, «Պոլոնեզ» Ա. Մուսորգսկու «Բորիս Գոդունով», «Պարսկուի հիների պար» «Խովանջինա» օպերաներում և այլն):

Հասարակական-քաղաքական իրադարձություններն ու պատմական նշանավոր դեպքերը ուժեղացնում և խորացնում էին ռետարդրությունը ազգային պարերի նկատմամբ: 1831թ. լեհական ապստամբությունից հետո տարածվում են լեհական կրակովյակները, 1848թ. հունգարական ապստամբությունից հետո՝ հունգարական չարդաշները:

Ըստ ռոմանտիկ բալետի (19-րդ դ. սկիզբ) կրկվության կոնցեպցիայի (ռեալ իրականություն և ֆանտազիա), բալետմայստերները նոր խորեոգրաֆիկ լուծումներ էին որոնում երկալիան գործողության լուծման համար: Ազգային պարը, ռեալ աշխարհի արտացոլման հիմնական նյութ հանդիսանալով, լայնորեն օգտագործվում է ռոմանտիկ բալետում: Ռոմանտիկ բալետի առաջին պարուի Սարիա Տայինին արդեն պարում է լեհական, գնչուական, իսպանական, հնդկական, տիրույան և այլ պարեր:<sup>2</sup> Հետագայում ժողովրդական բեմադրական պարերը զարգանում են բալետմայստերներ Ա. Ֆոկինի, Ֆ. Լոպուխովի, Վ. Վայնոնեսին և Կ. Գոյեյզովսկու բեմադրած բալետներում (Ա. Արենսկի «Եգիպտական գիշեր», Ռիմսկի-Կորսակով «Շեհերազադա», Է. Գրիգ «Մոլվեյգ», Ա. Գլիեր «Կարմիր կակաչ», Բ. Ասաֆև «Փարիզի կրակները» և այլն):<sup>3</sup>

Ստուդիական շարժման ընթացքում բալետների մաս կազմող այդ պարերն ուսուցանվում և կատարվում էին որպես առանձին համերգային համարներ: Ժամանակի ընթացքում ընդլայնվում են դրանց տարածման շրջանները, և շարունակվում են կրակովյակների, տարանտելաների, կիտայանկաների և այլ ազգային պարերի կատարումները:<sup>4</sup>

Փոքր-ինչ տարբերվում է նույն ժամանակաշրջանում Ա. Միլիթարյանի դեկավարու-

թյամբ գործող պարերի դպրոցի ծրագիրը, որտեղ չկային ռիթմապատիկ կամ նարմնամարզական եայուղներ: Դիմնականում կատարվում էին եվրոպական բեմադրական և պարահանդեսային պարեր (Վալմ, Վենգերկա, Չարդաշ, Պաղեսպան, Կրակովյակ, Սագուրկա, Նավաստիների պար, Պաղեկատր, Տարանտելա, Վալմ Բոստոն, Կիտայանկա) և ասիական<sup>5</sup> (Լեզգինկա, Չամիյա, Աղրբեջան, Կովկաս, Չայաստան, Շալախո, Նազ պար, Թարաքյանա): Դրանք եվրոպական և կովկասյան պարերի բեմադրական մշակումներ էին, որոնց մի մասը բալետային և օպերա-բալետային ներկայացումներից էին վերցված, իսկ մնացածը՝ պարուսուցների կողմից բեմադրված դպրոց-ստուդիաներում ու պարահանդեսներում:

XX դարի 20-ական թվականներին քաղաքային կենցաղ են մտնում պարահանդեսները: Պահպանվել են մի շարք հայտարարություններ,<sup>6</sup> որոնցում ստուդիաների դեկավարվարները իրավիրել են տվյալ երեկո պարելու՝ ծրագրում նշելով կատարվելիք պարերի ցանկը: Դրանցում, սովորաբար, նշվել է նաև տոնսի գինը, որը կանանց համար ավելի էժան է եղել, հավանաբար նրանց այցելությունը իրախուսելու նպատակով:

1924թ. դեկտեմբերի 26-ին Երևանում բացվում է բազմաբնույթ ծրագրեր ունեցող ևս մի պարային ստուդիա, որի գործունեությունը հայ պարային մշակույթի պատմության մեջ նշանակորվում է Թիֆլիսի պետական բալետի դերասան Վ. Արխստակեսյանի դեկավարությամբ և այն ներդրումով, որ նա ունեցավ հայ ժողովրդական բեմադրական պարավեստի ծևավորման գործում:

Երևանում, պարարվեստի ստուդիայից բացի, 1927թ. Լուսժողկոմատին կից բացվել է ռիթմի և պլաստիկայի ստուդիա՝ Աննա Շուրինյանի<sup>7</sup> դեկավարությամբ և Չասմիկ Միրու-

<sup>1</sup> Ю.Булычевский, В.Фомин, Краткий музыкальный словарь для учащихся, Л., 1988, с. 72-73.

<sup>2</sup> Н.В.Соловьев, Мария Тальони, СПб, 1912, с. 9.

<sup>3</sup> Р.Захаров, Сочинение танца, М., 1983, с. 64.

<sup>4</sup> Народно-сценический танец. Под. ред. К. Зацепина. М., 1976, с. 52-71.

<sup>5</sup> Կովկասյան պարի ոճը հաճախ անվանում են նաև ասիական:

<sup>6</sup> «Հայտարարություն», 9.10.1924, ՀՊԿԱ. ֆ.122, գ.1, գ. 769, էջ 16:

<sup>7</sup> Դուրինյան Ա., պարուիի-մանկավարժ, ՀՍՍՀ արվեստի արվեստի վաստ. գործիչ: 1912-13թթ. սովորել է Բաքվի

նյանի մասնակցությամբ: Նրանք ավարտել էին Սրբուհի և Լեռն Յագարապետյանների Թիֆլիսի ռիթմի և պլաստիկայի ինստիտուտը:

Երևանի ռիթմի և պլաստիկայի ստուդիան խնդիր է ունեցել երեխանների մեջ գարգացնել ռիթմի գգացողություն, բարձրացնել ընդհանուր ֆիզիկական պատրաստվածությունը, որը ինչստ անհրաժեշտ է պարերի ուսուցման համար: Ստույխան ունեցել է երեք տարիքային կուրս: Առաջին կուրսում 5-8 տարեկանների համար ռիթմի և պլաստիկայի գարգացումը հիմնականում տարվել է խաղերի միջոցով: Երկրորդ կուրսում 8-10 տարեկան երեխանները սովորել են պլաստիկ, պարային շարժումներ, պարի տեխնիկա և գեղարվեստական աշխատանքային վարժություններ (պարային-ռիթմիկ շարժումներով տուն կառուցել, կարել, գործել և այլն):<sup>1</sup>

Ավագների հետ, որ կազմում էին երրորդ կուրսի երկու խումբ (9-15 տարեկան և բարձր), պարապմունքները տարվել են նաև թատրոնական թեքումով: Բացի ռիթմից ու պլաստիկայից, նրանք կատարել են հոգերանական և դիմախաղային վարժություններ: Զգալի տեղ է տրվել Ժ. Դալկրոզի համակարգով վարժություններին և Ա. Դունկանի ագատ ոճին:<sup>2</sup> Սկզբնական շրջանում ստուդիայում սովորել է 60 երեխա: Մեկ տարի անց տերի է ունեցել նրանց ելույթի առաջին փակ դիտումը, որին հրավիրված են եղել Լուսժողկոմատի դեկավայրեր և աշակերտների ծնողները: Ցուցադրվող ծավալուն համերգային ծրագրում եղել են գեղարվեստորեն աշխատանքային բարդ գործնթացներ վերարտադրող մասսայական ազիտ-թեմայորություններ և պարային համարներ: Ծրագիրը կազմված է եղել այնպես, որ սովորողները ցուցադրեն ուսուցման ողջ ընթացքը՝ տարրական վարժություններից սկսած

և վերջացրած բարդ ռիթմիկ հորինվածքներով ու մասսայական պարերով:

Գործունեության երրորդ տարում ստուդիան ունեցել է շուրջ 100 աշակերտ: Ինքնուրույն գործող երկու ստուդիաների աշխատանքի արդյունքներն ամփոփող ելույթները տեղի են ունեցել Յայաստանում խորհրդայային կարգերի հաստատման 10-ամյակին նվիրված հայկական արվեստի օլիմպիադայում:<sup>3</sup>

Վ. Արիստակեսյանի պարարվեստի ստուդիան 1930թ. դեկտեմբերի 3-ին ծավալուն ծրագրով հանդես է եկել Պետքատրոնի շենքում, իսկ դեկտեմբերի 7-ին՝ նույն դահլիճում իր նվաճումներն է ցուցադրել Շուրինյան-Սիրունյան ռիթմի ու պլաստիկայի ստուդիան: Ստուդիայի ծրագիրը կագմված է եղել երեք մասից: Ակզերում կատարվել են ոտքերի, ծեռքերի արտահայտչականության և իրանի ճնունության (էտյուդային) վարժություններ՝ դասական կոմպոզիտորների (Շուման, Շուրերտ, Մենդելսոն և այլն) երաժշտության ուղեկցությամբ, այնուհետև՝ հոգերանական և հանգստացնող վարժություններ, որիմիկ հորինվածքներ և վերջում՝ ցատկեր: Դամերգի երկորորդ մասում կատարվել են մանկական պարեր՝ գնդակախաղ, Սիմֆոնիկ էտյուդ, Շունական բարեվեֆ և այլն, իսկ երրորդում՝ Վալս, Պոլկա, ոճավորված համարներ, կովկապան պարեր՝ Կովկաս, Ղերբենտ (թեմադրությունները՝ Սրբ. Լիսիցյանի, Ա. Դուրինյանի և Դ. Սիրունյանի): Ելույթի ընթացքում նվագակցել են Ռադիոյի ստուդիայի արևելյան նվագախումբը և դաշնակահարը:

Ի տարրերություն պարարվեստի ստուդիայի, որիմի և պլաստիկայի ստուդիայում չեն ուսուցած դասական և հայ ժողովրդական պարեր: Այն ունեցել է որոշակի ծրագրային ուղղվածություն, շարունակելով միութենական համանման ստուդիաներին բնորոշ գործունեության ոճն ու հատկապես թիֆլիսյան ստուդիաների ավանդույթները (աղ. XXIV):

Երևանյան ստուդիական շարժման օջախներից է եղել 1930թ. բացված օպերային ստուդիան (դեկ. Ա.Գ.Տեր-Ղևոնյան), որտեղ,

բարետային ստուդիայում: 1926թ. ավարտել է Թիֆլիսի ռիթմի և պլաստիկայի ինստիտուտի մանկավարժության րաժինը: 1927թ. տեղափոխվել է Երևան: Դասավանդել է Գ. Սունդուկյանի անվան թատրոնում, պարի ուսումնարանում, թատրոնական ինստիտուտում, Գ. Սունեֆանյան, Կենսագրական բարարան, Եր., 1973, հ. Ա. էջ 292:

<sup>1</sup> Գ.Բաղրամյան, Սիլվա Մինասյան, Եր., 1976, էջ 5:

<sup>2</sup> «Ծրագիր ռիթմի և պլաստիկայի ստուդիայի ցուցադրական երեկոյի», Եր., 1929, 3Ահ, Պարարվեստի արխիվ:

<sup>3</sup> «Ծրագիր Յևսթ արվեստի առաջին օլիմպիադայի», Եր., 1930, 3Ահ, Պարարվեստի արխիվ:

Մրբ. Լիսիցյանի ղեկավարությամբ գործել է նաև բալետային դասարան:՝ 1932թ. նրա նախաձեռնությանը բացվել է ոդիմի, պլաստիկայի և պարի ստուդիան:

1920-1930-ական թվականների հայկական պարային ստուդիական շարժման պարացաներում կարելի է առանձնացնել մի քանի հիմնական ուղղություն:

Դրանցից մեկը դասական պարարվեստի ուսուցումն ու տարածումն էր, որը սկզբնավորվելով այս շրջանում, հետագայում առանձին ուղղություն դարձավ ու զարգացավ Հայաստանում:

Մյուսը Ա. Ղունկանի «ագատ պարի» ուղղությունն էր՝ հեռու դասական պարարվեստի կանոններից:<sup>2</sup> Դրան բնորոշ էին Գրիգի, Շուբերտի, Մոցարտի, Բեթհովենի, Դվորժակի երաժշտությամբ, հունական դասական արվեստի ոճով պլաստիկ էսյուդները և քաղաքական թեմաներով պարերը (Մարտեյոց, Կարմիր քայլերգ, Բոլորը ղեաի ավիաքիմ և այլն): Սասսայական բնույթ էր կրում նաև գեղարվեստամարմնամարզական և ոդիմապլաստիկ վարժությունների ուսուցումը, որի հետ սունչվում է «Սեխանիկական պարեր կամ Մեքենայական վարժություններ» կոչվող ուղղությունը, որտեղ հիմնականում ընդգծվում էր աշխատանքի թեման:

Ստուդիական շարժման ընթացքում հատկապես տարածված են եղել ժողովրդական թևական, եվրոպական, արևելյան և կովկասյան պարեզը, որոնք տարածվեցին ոչ միայն կենցաղում, այլև թեմահարթակներում՝ հայ թեմադրական պարարվեստում ունենալով բազմաթիվ մեկնարանություններ:

Հայաստանում պարային-ստուդիական շարժումը նշանավորվեց նաև նըանով, որ առաջին անգամ հայկական ժողովրդական պարեզը թեմադրական մշակման ենթարկվեցին ու ցուցադրվեցին որպես ագգային պարարվեստի ինքնատիպ նմուշներ: Ստուդիական շարժումը տեղի պայմաններում գտավ իր ագգային դիմագիծը: Ներմուծված ուղղություններին ու ոճերին գուգահեռ, գեղարվեստա-

կան մշակում ստացավ ազգային պարը: Այն դարձավ Մրբ. Լիսիցյանի և Վ. Սրիստակեսյանի ղեկավարությամբ գործող ստուդիաների ստեղծագործական ուղին, այն է՝ հայ ժողովրդական պարերի հավաքում, մշակում և բեմականացում:

XX դարի 20-30-ական թվականները հայ պարարվեստի պատմության մեջ բնորոշվում են որպես ստուդիական շարժման ակտիվ շրջան:<sup>3</sup> Բազմաբնույթ ծրագրեր ունեցող պարային ստուդիաներն այն օջախներն էին, որոնք ոչ միայն ուսուցանում էին պարարվեստ, այլև ստեղծագործական աշխատանքով որակական նոր փոփոխությունների նախադրյալներ ստեղծում:

1930-ական թթ. կեսերին ստուդիական շարժումն սկսում է անկում ապրել, որը պայմանավորված էր մի շարք օբյեկտիվ պատճառներով: Նախ, դրանց մի մասը մասնավոր հաստատություններ էին, և դժվար էր վերահսկել ուսուցման ընթացքը: Ունենալով սիրողական բնույթ՝ ստուդիաներն ընդգծված մասնագիտական վարպետության և կատարելության չին հասնում: Մի որոշ ժամանակ անց առաջ էր գալիս համերգային գործունեություն ունենալու անհրաժեշտություն, սակայն, ենելով ստուդիաների համրամատչելի և ուսուցողական կենտրոն լինելու խնդրից, չեր մտնում դրանց ծրագրերի մեջ:

Այնուամենայնիվ, ժամանում գտնելու, սեփական ստեղծագործական աշխատանքը ցուցադրելու, գնահատվելու, մասնակիցների ենթուգիազմն ու կատարողականությունը բարձրացնելու նպատակով համերգային գործունեությունը անհրաժեշտություն էր դառնում, սակայն համերգային ծրագիրը գեղագիտական այլ նորմեր էր պահանջում, իսկ ուսուցողական ստուդիաների միջոցները սահմանափակ էին: Այդ իսկ պատճառով ժամանակի ընթացքում որոշ ստուդիաներ դադարեցին գոր-

<sup>3</sup> XX դ. 90-ական թթ. կեսերից երևանում կրկին ծավալվեց սառուղական շարժումը, որը նախորդ փուլին բնորոշ ուղղությունների հետ մեկտեղ ուներ ժամանակակից դրսերումներ (Ա. Ղույանի մանկական մշակույթի կենարոնի պարի ստուդիա, Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի թատրոնի պարային ստուդիա, ժամանակակից և պարահանդեսային պարերի միշտաքանակությունը և այլն):

<sup>1</sup> **Մ. Մուրադյան.** Եղվ. աշխ., էջ 31:

<sup>2</sup> **Ю. Слонимский.** В честь танца, М., 1968, с. 219.

ծել վերը նշված համգամանքների և սովորողների մեջ արտահոսքի պատճառով:

Ժամանակի պահանջներին համահունչ նորարարությունների կարիք էր զգացվում, իսկ ստուդիաներն արդեն կորցրել էին պարսյին մշակույթում նոր, գեղագիտական նորամուծություններ կատարելու հնարավորությունն ու առաջնությունը: Ավարտվում է իրեն սպառած պարային-ստուդիական շարժումը՝ միաժամանակ հիմք հանդիսանալով հետագա պարային-պրոֆեսիոնալ մշակույթի զարգացման համար՝ Դայաստանի երգի-պարի պետական անսամբլ (ղեկ. Թ. Ալբումյան), Դայկական Պետական Էստրադային նվագախումբ (ղեկ. Ա. Այվազյան):

Ստուդիաների մասնակոցների մի մասը մտնում է նոր ծևավորվող էստրադային պարային խմբեր, մի մասն է՝ ֆիզիկական մշակույթի զարգացմանը վերաբերող ուղղությունների հիմքն է ննում:

Դայ բեմական պարարվեստում պարային-ստուդիական շարժման հենքի վոա ծևավորվում է պարի երկու նշանավոր խումբ. Արբութի Լիսիցյանի ղեկավարած օիթմի, պլաստիկայի և պարի ստուդիայի նիման վոա՝ Դայկական ազգագրական պարերի խումբը, որը հետազյում վերակազմավորվում է պարարվեստի տեխնիկումի, ավելի ուշ՝ պարարվեստի ուսումնարանի:

Վ. Արխտակենյայանի ղեկավարած պարարվեստի ստուդիայում ծևավորվում է Դայաստանի ազգագրական պարերի պետական առաջնամբը:

XX դարի 30-ական թվականներին ծևավորվում է մշակութային մի ուղղություն և՝ ժողովողական ինքնագործունեությունը, որում շարունակվում է ժողովողական պարի բեմադրական մշակումը:

### Ժողովողական պարը հնքնագործունեությունում

Խորհրդային կարգերի հաստատման առաջին իսկ տարիներին մշակվեցին *սոցիալիստական արվեստի* հիմնական ուղղությունների դրույթները: Կարևոր նշանակություն

տրվեց մշակույթին, նոր գաղափարախոսության պայմաններում այն նորովի վերընկալելու և զարգացնելու խնդրին:

Խորհրդային գաղափարախոսության պայմաններում իրականացվում էր «կուլտուրական հեղափոխություն», որի նպատակն էր վերացնել անգրագիտությունը, ակտիվացնել բնակչության կուլտուր-լուսավորական մակարդակը, զարգացնել գիտությունն ու արվեստը՝ նոր, «արողետարական» գաղափարախոսության դիրքերից:

XX դարի 30-ական թվականները համապատասխանում էին «կուլտուրական հեղափոխության» երկորոր փուլին, որի հիմնական խնդիրն էր նոր, սոցիալիստական մշակույթի զարգացումը:<sup>1</sup> Այդ ժամանակահատվածը հայ պարարվեստի պատմության համար կարելի է որպես պարային ինքնագործունեության ծևավորման շրջան:

Ժողովողական արվեստի հասարակական բնույթը հնարավորություն էր ընծեռում սոցիալիստական գաղափարները հեշտությամբ քարոզել ու տարածել:

«Արվեստը մասսաներին» նշանաբանով Խորհրդային Ախության ողջ տարածքում, մասնավորապես՝ Խորհրդային Դայաստանում ծավալվում է ժողովողական ստեղծագործությունների ցուցադրման լայն շարժում: Կազմակերպվում են տարբեր օլիմպիադաներ, փառատոններ և սպարտակիադաներ: Երկրի վարչական բաժանումներին համապատասխան, դրանք լինում էին գյուղական, շրջանային, քաղաքային, հանրապետական, անդրկովկասյան, համամիութենական և այլ կարգերի: Նախնական մրցույթների հաղթողներն իրավունք էին ստանում մասնակցելու միջոցառումների հետագա փուլերին:<sup>2</sup> Այդ միջոցառումներն ընդգրկել են ժողովողի րուլոր խավերը, անսպաս տարիքից (աղ. XIV, նկ.2): Եղել են մանկական, դպրոցական, երիտասարդական, ուսանողական, զինվորների, ինքնուս ստեղծագործողների մասսայական

<sup>1</sup> Հ. Խաչատրյան, *Культурная революция в Советской Армении, 1920-1940*, Е., с. 13-14.

<sup>2</sup> Т. Пуртова. Истоки самодеятельного танцевального искусства и проблемы его развития, *Народный танец. Проблемы изучения*, СПб, 1991, с. 132.

Երգի և այլ օլինպիադաներ ու փառատոններ:<sup>1</sup> Դրանք հիմնականում նվիրվել են պետական կարևոր ու հիշարժան իրադարձություններին՝ Յոկտեմբերյան հեղափոխության 10-ամյակոն. Դայաստանուն խորհրդային կարգերի հաստատման 15-ամյակին, Կարմիր բանակի 20-ամյակին, «Սասունցի Դավիթ» էպոսի 1000-ամյակին (1939թ.) և այլն.<sup>2</sup>

Խորհրդային գաղափարախոսության համաձայն՝ ժողովրդական կատարումների թեման եղել է նոր, սոցիալիստական կյանքն ու աշխատանքը, կոլեկտիվիզմը և դրանք ստեղծողների գովերգումը: Կատարողները հանդես են եկել քաղաքական բովանդակությամբ բանաստեղծություններով ու երգերով, որոնք ուղեկցվել են ժողովրդական պարերի կատարմամբ («Առաջնորդ Ստալին», «Ընկերներ, նկեք ժողովի», «Լենին» և այլն).<sup>3</sup>

Պատմական յուրաքանչյուր փուլի սոցիալ-քաղաքական գաղափարախոսություն, որն արտացոլվում է մշակույթում, ազդեցություն է ունեցել նաև պարարվեստում:

Այդ տարիներին Դայաստանում կազմակերպված ժողովրդական ստեղծագործության համարիսությունները զգալի նյութ են տալիս ժամանակաշրջանի ժողովրդական պարային մշակույթի վերաբերյալ: Այդ շրջանում է տարածում գտնում մասսայական արվեստի գաղափարը:<sup>4</sup> Դանդես են գալիս միացյալ երգչախմբեր (աղ. XX, նկ. 2):

Մասսայական պարը, որն ունի համաժողովրդական բնույթ, հատուկ կազմակերպվա-

<sup>1</sup> ՀԱՅՄ արվեստի սովորական օլիմպիադա (Եր., 1930թ.), ժողովրդական սրբեստի հանրապետական օլիմպիադա (Եր., 1937թ.), Արվեստների անդրկովկասյան սովորական միացյալ միջազգային մրիլիստի, 1934թ.) և Երկրորդ (մրիլիստի, 1935թ.) օլիմպիադաներ, ժողովրդական պարի համամիութենական փառատոն (Սովորական մրիլիստի, 1936թ.) և այլն:

<sup>2</sup> *Ո. Սագմանյան*, նշվ. աշխ., էջ 220:

<sup>3</sup> Հետուագայում պուտենուային պարերի տարածման հետ սկսվեց քսողաքական թեմաներով հաճախ նույնիսկ մեծակտավ պարային թեմադրությունների ստեղծումը («Պատուեաւուզ և Խաղաղություն»՝ Դ. Դուկասյանի անվան քսողաքային սիխոներ-պալատ, թեմ՝ Խ. Մարգարյանի, 1970-ական թթ., մասսայական պարեր «Երերունի Երևան» և «Ռուկե աշուն» ժողովրդական տոնախմբություններին, թևմ՝ Վ. Խանճամիրյանի, Խ. Մարգարյանի, Ա. Պարիրյանի և այլոց): Տես՝ ժամանակակից թեման խորեգրաֆիկ հիբնագործ խմբերի խաղացանկում, Եր., 1937, էջ 6:

<sup>4</sup> *Ո. Սագմանյան*, նշվ. աշխ., էջ 142:

ծություն, միանմանություն, համապատասխանում էր սոցուալիստական գաղափարախոսության սկզբունքներին, ուստի համերգները, սպարտակիադաները և այլ մասսայական միջոցառումներն ուղեկցվում էին պարերի կատարմանը: Դրանք հաճախ ունենում էին ֆիգուլտուրային, երթեմն եւ աշխատանքային բնույթի լուծումներ:<sup>5</sup>

Այդ հանդիսություններին և առանձին պարային համարներին բնորոշ են դառնում քաղաքական խորհրդանշերի կիրառումը, մոնումենտալիզմը, պարուը: Երևելի տեղերում փակցնում էին Ստալինի կամ Բերիայի մեծադիր նկարները, կամ Լենին-Ստալին գույգի պատկերը: Ստեղծագործությունների գերակշիռ մեծամասնությունը, որոնք կատարվում էին առանձնահատուկ պարոսով, ծոնվում էին «Ժողովուրդների հորը»:<sup>6</sup>

Ընդունված էր նաև հանրածանոթ ստեղծագործությունների մոտիվներով Ստալինի մեծարումը, նրան նվիրված երգերն ու պարերը:<sup>7</sup>

Մոսկովյան մի համերգից առաջ, որին «Ժողովուրդների հայրը» պետք է ներկա լիներ, բոլոր մասնակիցները սուուզման են ենթարկվել (1939թ.): Պարային ուեկվիզիտը փոխվել է՝ սափորը փոխարինվել է սկուտեղով (սափորի մեջ կարող էր ոումբ լինել):<sup>8</sup>

Առանձնահատուկ տեղ է տրվել նաև մասնակիցների սոցիալական ծագմանը: Չնայած, ժողովրդական ստեղծագործության այդ միջոցառումներին կարող էին մասնակցել երկրի բոլոր քաղաքացիները, պաշտոնական գաղափարախոսությանը հարազատ մնալու նպատակով, որպես բանվորագյուղացիական երկիր, շեշտը դրվել էր կոլտնտեսային գյուղացիության և գործարանային բանվորների վրա:<sup>9</sup>

<sup>5</sup> Массовое действие (сценические игры), М., 1929, с. 30-35.

<sup>6</sup> *Ա. Տոնիկ*, ժողովրդական ինքնագործ արվեստի օլիմպիադան Ղափանում, ԽԱ, Եր., թ. 5, 1.04. 1937, էջ 5:

<sup>7</sup> *Ս. Մուրացյան*, Լենինի ու Ստալինի կերպարները սովորական երաժշտական ստեղծագործության մեջ, Տեղեկագիր, Եր. 1949, 10, էջ 111-115:

<sup>8</sup> *Ա. Կիլիչյան*, «Ա. Կարապետյանի հիշողությունները», Եր., 1989, ՂԱ, Պարարվեստի արիթիվ:

<sup>9</sup> Հետազոտություն, իրեն բանվորական խումբ՝ ինքնագործություննում հանդես էին գալիս պրոֆեսիոնալ կապարողներ, քանի որ այդպիսի խմբերին առավելու-

Խորհրդային մշակույթին բնորոշ ուղղություններից է եղել ինտերնացիոնալիզմի գաղափարը: Մասսայական միջոցառումները մեծ մասամբ բացվել են «Ինտերնացիոնալ» երգի համատեղ կատարմամբ: Մշակույթի ինտերնացիոնալ բնույթը պարարվեստում արտահայտվել է «Ինտերնացիոնալ պար» խմբերի ստեղծմամբ, որոնց ոչ միայն կազմն էր բազմազգ, այլև ծրագիրը, որը ներառում էր տարրեր ազգերի պարեր (աղ. XXII, նկ.1):<sup>1</sup> Կատարվում էին տարրեր ազգերի ժողովրդական մենապարեր, գուգապարեր և խմբական պարեր, նաև՝ դրանց համահավաքը, որն այդ տարիներին ծևավորվելով՝ հետագայում արմատավորվեց և կազմավորվեց «Բարեկամություն» կոչված սյուիտային պարի ժանրը: Այդպիսի խմբերում պարում էին ոուսական, վրացական, աղրբեջանական, հայկական, ուկույնական, մոլովական, բելոռուսական, ուգբեկական և այլ պարեր: Դրանք կանոն, դրանք ունեին շքեղ մուտք (նախարար) և ավարտ: Այդ մասսայական պարերը սկսվում էին «Եղբայր ժողովուրդների» տարագներ հագած պարողների քայլերով: Այնուհետև իրար էին հաջորդում տարրեր ազգերի մենապարերն ու գուգապարերը: Դրանց կատարման ընթացքում պարախումը բնորոշ շարժումներով ուղեկցում էր մենապարողին կամ գույքին: Այդպիսի պարերը մեծ մասամբ ավարտվում էին ոուսական, իսկ հետագայում՝ նաև եայկական խմբական պարով:<sup>2</sup>

Բացի ինտերնացիոնալ պարի խմբերից, ժողովրդական ստեղծագործության ցուցադրման միջոցառումներին քիչ չեն եղել նաև այլ ազգերի ժողովրդական պարերի առանձին կատարումներ: Դայկականի հետ կատարվել են նաև ոուսական, ուկույնական, վրացական, թաթարական, քրդական և այլ պարեր: Պարագաների այդպիսի խայտարդեսությունը նույնպես կապված էր ինտերնացիոնալիզմի գաղափարի հետ, ըստ որի «Եղբայր ժողո-

վուրդներն» ապրում ու ստեղծագործում էին համատեղ:

Այդ ժամանակաշրջանում Հայաստանում արոյունաբերության զարգացման ու իրագործման մեծ ծրագրեր առաջ քաշվեցին: Քանի որ տեղում կարող էր մեծ կարիք կար, տեխնիկական և բանվորական ճամանագիտական աշխատութիւններությունը կատարվեց Ռուսաստանի տարրեր քաղաքներից: Նրանք բնակություն հաստատեցին առավելապես Երևան, Վանաձոր և Գյումրի քաղաքներում: Փառատոնների ժամանակ իրենց ազգային պարերով հանդես էին զալիս նաև նրանց ինքնագործ խմբերը՝ կատարելով տարրեր պարեր, չաստուշկաներ, չեղուկաներ ու հոպակներ:<sup>3</sup> Նրանց ընդօրինակում էին նաև հայազգի պարողները, որոնց կատարմամբ դրանք վերածվում էին հայկական և ոուսական ազգային պարանձերի անձաշակ խառնուրդի:

Նման երևույթը հատուկ էր ոչ միայն Հայաստանին, այլև միութենական րոլոր հանրապետություններին: Պարային խմբերի ծրագրերում հիմնականում ընդգրկվում էին թաթարական, հունգարական, լեհական և կովկասյան պարեր: Մոսկվայի, Լենինգրադի և ոուսական խոշոր արդյունաբերական կենտրոնների պարային խմբերը թեմ էին հանում մեծ քանակությամբ ժողովրդական կեղծ «ցիգանչկաներ», «վեճովերկաներ», «չեղուկաներ» և «մատլուտներ», որոնք իրականում հանրահայտ «յարլոչկայի» տարրերակներ էին: Ոուսական պարերը, ինքնագործ խմբերի կատարմամբ աղավաղվում էին, ներկայացնելով տրյուկներով հագեցված շարժումների հավաքածու, իսկ ուկրաինական պարերը՝ հիմնականում սահմանափակվում էին հոպակով: Դրանք այնքան հեռու էին ժողովրդական սկզբնադրյուրից, որ դժվար էին ճանաչվում: Մասնագետների կարծիքով, ժողովրդական պարի 1936թ. մոսկվայան համամիութենական փառատոնի ամենամեծ թերությունը ծրագրե-

թյուններ էին տրվում (մասնակցություն համերգներին, արտասահմանյան շրջագայություններ և այլն):

<sup>1</sup> Գ. Թօնարյան. Ժողովրդական արվեստի օլիմսլիադը Երևանում, ԽԱ, Եր., 16.04. 1937թ., 6(30):

<sup>2</sup> Современныи балльный танец, М., 1978, Под. ред. В. Смирнова и В. Уральская, с. 11.

<sup>3</sup> «Օլիմահառակի ծրագիր», Եր., 1937, ՀԱԻ, Արք. Լիսիցյանի արխիվ:

րուն բուն ռուսական պարերի բացակայությունն էր:<sup>1</sup>

Այդ ժամանակաշրջանի իրողորդային ընտերնացիոնականի վկայությունն էին ուամարգում միութենական մասշտաբով պարբերաբար կազմակերպվող փառատոնները, որոնց նշանաբանն էի. «Հևով ազգային, բովանդակությամբ սոցիալիստական»: Այդպիսի մի համամիութենական միջոցառումից հետո, 1986թ. Սոսկայում ստեղծվեց «ԽՄԿՍ ժողովուրդների պարերի պետական անսամբլ» (ղեկ. Ի. Սոխտեն),<sup>2</sup> որը տարբեր ազգերի ժողովրդական պարերը բեմականացնող առաջին պրոֆեսիոնալ համույթն էր իրորդային երկրում:

Ինտերնացիոնալ պարի ժամբանուն շատ տարածված է Եղել և մինչև սյօն էլ գոյատևում է մանկական պարային խնդերում (աղ. XXII, նկ.2):

Խորհրդային հասարակարգի գաղափարախոսության արդյունքներից մեկն էլ, որը քարոզվում էր նաև արվեստի միջոցներով, ազիտ-բրիգադների առաջացումն էր:<sup>3</sup> Դրանք փոքր խմբեր էին, որոնք համերգներով հանդես էին գալիս բեմերում կամ բացօթյա, հեռավոր շրջաններում, արդյունաբերական ծեռնարկություններում, բարձրադիր լեռնային արոտավայրերում: Այդ խմբերը իրենց ծրագրերում ունեին քաղաքական պլակատներ, պաթետիկ մենախոսություններ, էստրադային համարներ, ժողովրդական երգեր ու պարեր (աղ. XX, նկ.1):

Ազիտ-բրիգադների գործունեության դրսերումներից մեկն էր մասսայական ազիտ-պարի ծևավորումը, որը պետք է ունենար որոշակի բովանդակությամբ սոցիալիստական սյուժեե, պարզ պարային շարժումներ, որոնք մատչելի լինեին շատերի միասնական կատարման համար:<sup>4</sup> Ազիտ-պարը քարոզվում էին ոչ միայն ցուցադրությամբ, այլև մասսաներին պարն ուսուցանելու միջոցով՝ ակումբներում,

դաշտերում՝ գյուղատնտեսական աշխատանքից հետո. Երրոտասարդական ուավաքներուն և այլն: Սկզբնական շրջանում այդպիսի պարերին բնորոշ էին նաև երգը, գրավոր կամ բանավոր լոգունգները՝ (Կոլխոզային պար, Երիտասարդական, Բոլորս ղեպի ավիացիմ և այլն):

Քաղաքական նման գաղափարախոսության արդյունքում ծևավորվեցին նաև շքերթային պարեր, որոնք կատարվում էին շքերթների ընթացքում՝ երթերի պահին կամ դրանց կանգաների ժամանակ՝ փողոցներում ու հրապարակներում: Շքերթի ժամանակ կարող էի բեմադրվել նաև հրապարակում կատարվող հատուկ պար՝ որպես միջոցառման առանցքային համար: Շքերթային պարերի կատարողները կարող էին լինել դրա մասնակիցները, ինչպես նաև ազգային տարագ հազար ինքնազոր իմբեր, որոնք միաժամանակ ցուցադրում էին իրենց արվեստը (աղ. XXI):

1930-ական թվականներին, Խորհրդային Հայաստանում գործել են մի շարք ինքնագործ պարի խմբեր. Երևանում՝ Կառուցողների միության ակումբի ազգագրական պարի խումբը (ղեկ. Վ. Սկրտչյան), Լուսաշիյ Լոռվա պարերի և Նավաստիների պարերի խմբերը (ղեկ. Է. Սանուկյան), Տեղական շինանյութերի արտադրության պարի խումբը (ղեկ. Վ. Մրգանճյան), Արարկիրի դպրոցի երգի-պարի խումբը, Ա. Գորկու անվան դպրոցի Ա. Խանջյանի անվան պիոներական ջոկատի երգի-պարի ազգագրական խումբը (աղ. X), Քրդական տեխնիկումի պարի խումբը (ղեկ. Է. Սանուկյան) և այլն:

Պարի խմբեր են Եղել նաև Ապարանի, Աշտարակի, Տավուշի, Ալասահայի, Արտաշատի, Արմավիրի, Թալինի շրջաններում, Գյումրիում, Դիլիջանում, Կապանում (աղ. XVII, նկ. 2):

Այդ տարիներին Հայաստանում կազմակերպվող ժողովրդական ստեղծագործության միջոցառումներին մասնակցել են այդ նոր ծևավորված, փոքրաթիվ խմբերը և անհատ կատարողներ:

Անհատ կատարողների թիվը գերազանցել է գուգապարով և խմբական պարով հանդես եկողներին: Թերևս պատճառ այն է, որ հա-

<sup>1</sup> Т.Пуртова, նշվ. հոդված, էջ 134:

<sup>2</sup> А.Чудновский, Ансамбль Игоря Моисеева. М., 1959, с. 13.

<sup>3</sup> И.Шаров, Режиссура эстрады и массовых представлений, М., 1968, с. 269.

<sup>4</sup> Н.Александрова, М.Бурцева, Е.Шишмарева, Массовые агит-пляски, М.-Л., 1931, с.9.

տուկ ցուցադրությամբ հանդես գալու համար պետք էր կազմակերպել մի քանիսի համատեղ ելույթ, իսկ անհատ կատարողների համար նման միջոցառումներին չեր բացառվում նաև իմպրովրացիոն ազատ մոտեցումը: (աղ. XIV, նկ. 1):

Ցուցադրված պարերը կարելի է բաժանել երեք խմբի:

ա) ժողովրդական պարային ֆոլկլորի նմուշներ, որոնք ներկայացվել են իրենց անաղաց (առւտենտիկ) վրճակով, առանց որևէ փոփոխման ու մշակման: Դրանց կատարմար օլիմպիադաների ժամանակ հիմնականում հանդես են եկել տարեց մարդիկ (Բաղդագյուղի, Ռանգի, Խոնգի, Թարաքյանա, Զեյռեկ, Թողի, Զիլալի և այլն):<sup>1</sup>

բ) ժողովրդական պարային ֆոլկլորի նմուշներ, որոնք հարմարեցվել են րեմին: Դա հատկապես վերարերվում է խմրական պարերի թեմականացմանը, երբ կատարողները նախօդոք պարագլիք կամ խմրի ղեկավարի հետ պայմանավորվում էին պարի մուտքի, տևողության, պարերի քանակի, մի պարից մյուսին անցնելու, պարի ավարտի և այլնի մասին (Ապքմա, Զոփի, Ղող, Թեմուրի, Թամզարա, Փայլանջո, Յար-խուշտա և այլն):

գ) Ամանագետների թեմադրած հեղինակային ժողովրդական կամ թեմատիկ պարեր (Թիթեռնիկներ, Թոփալ Շայկոյի պարը, Տրուկա, Պոլկա, Խմրապետ Սկո, Աշխատանքային պար, պարեր «Անուշ» և «Ալմաստ» օպերաներից և այլն):

XX դարի սկզբին, Մեծ Եղեռնից մազապուրծ բազմահազար հայեր Արևմտյան Շայաստանից գաղթեցին աշխարհի տարրեր երկրներ: Նրանց մի գգալի մասը ապաստան գտավ Արևմտյան Շայաստանի տարրեր շրջաններում, պահպանելով ավանդական շատ սովորություններ և կենցաղին բնորոշ առանձնահատկություններ, այդ թվում նաև պարերը: Նետագայում որպանք տարածվեցին Արևմտյան Շայաստանի շատ գյուղերում և քաղաքներում: Դրանք հիմնականում խմրական պարեր էին, որոնք ընդունվեցին տեղացիների

կողմից և սկսեցին կատարվել տեղական պարերի հետ մեկտեղ, հաճախ նույնիսկ առաջնություն ստանալով, Այդպես՝ Արարատյան դաշտում, Աշտարակի և Արարատի շրջաններում տարածվեցին Կասպուրականի պարերը (Տնգոզ, Մինջանե, Լորկա, Ֆորկա, Շարե Մայրոքե, Յար-գյոզալ, Լուդկի և այլն),<sup>2</sup> Թալինի, Աշտարակի, Աշոցքի շրջաններում՝ Տարոնի պարերը (Գյովնդ, Վեր-վերի, Գորանի, Մայրմե, Խնը ոտ և այլն):

Կան պարեր, որոնք տարածված են Եղել թե՛ Արևմտյան, թե՛ Արևելյան Շայաստանում (Գյովնդ, Գորանի, Վեր-վերի, Փափուրի): Փափուրին ամենատարածված համահայկական պարերից է Եղել, սակայն ավելի հաճախ այն պարել են մշեցիները, սասունցիները և ալաշկերտցիները:

Ժողովրդական ստեղծագործության ցուցադրման միջոցառումների ժամանակ կատարվել են թե՛ Արևմտյան Շայաստանի, թե՛ տեղական պարեր: Արևմտյան Շայաստանի ազգագրական շրջաններում շատ ավելի տարածված էին հայկական ժողովրդական, կովկասյան կամ ասիհական մենապարերն ու զուգապարերը (Խնկի ծառ, Զուռնի տրնգի, Շոյ Նազան, Շալախոն և այլն): Դրանք հիմնականում կատարվում են արևմտյան լարային և հարվածային գործիքների նվազգակցությամբ: Շարսանիքներին մի շարք խմրական պարեր կատարվում են զուռնայի և դիոլի նվազգակցությամբ: Երաժիշտների խումբը սովորաբար կազմված էր լինում երկու զուռնաչուց և մեկ թմրկահարից:

Առաջին զուռնաչին (ուստա) նվազում էր հիմնական մեղեղին, իսկ երկորորդը, որը ժողովրդական խոսվածքում կոչվում է դամքաշ՝ ուղեկցում էր նվազը: Թմրկահարը (դիոլչի) նվազում էր ըստ երաժշտության ոիթմի: Արևմտյան Շայաստանուն նվազողների խումբը կազմված է Եղել միայն զուռնաչուց և դիոլչուց: Արևմտահայերի գործնան տարրերվում է լայն փողով, իսկ դիոլը՝ մեծ չափերով:<sup>3</sup>

<sup>2</sup> Է. Պետրոսյան, Ջ. Խաչատրյան, Արմանական ժողովրդական պարերի մասին, Եղել, 1937, թիվ 7 (81), էջ 10-12:

<sup>3</sup> Ա. Կոչարյան, Արմանական ժողովրդական պարերի մասին, Եղել, 1937, թիվ 7 (81), էջ 10-12:

Ժողովրդական ստեղծագործության ցուցադրություններին բնորոշ են եղել գյումրեցիների հարսանեկան (Գյումրվա հարսանիք, Կլոր պար, Հարսմապար) և երգիծական (Թոփալ Շայկոյի պարը, Տուշ-Տույ, Օիստը քյոշանի տրնգի) պարերը (Աղյուսակ XV):<sup>2</sup>

Գեղարվեստականորեն մշակված ավանդական հարսանեկան սովորույթները և ծեսերի ցուցադրությունը բեմից նորույթ էր հայ ժողովրդական բեմադրական պարարվեստում: «Գյումրվա հարսանիքի» ցուցադրությունը դրա լավագույն նմուշներից էր, որը չկորցրեց կենսունակությունը նաև հետագայում:<sup>3</sup> Նման պարերի ժամանակ օգտագործվում էին որոշ պարագաներ (ատրիբուտներ), որոնք, ըստ Երևանի վաղ անցյալում ծիսական նշանակություն են ունեցել. իսկ ժամանակի ընթացքում՝ մոռացվել (ջորվ լի բաժակ, ծաղկեփունջ, մոմ, մահակ, թաշկինակ, ցորենի խուրծ և այլն):<sup>4</sup>

Այս ժամանակահատվածում լսյնորեն տարածված են եղել կովկասյան կամ ասիական պարերը (Աղյուսակ XVIII): Դրանց մասսայականությունը հատկապես ընդգծվել է ժողովրդական ստեղծագործության օլիմպիադաների ու փառատոնների ժամանակ: Կովկաս-յան պարերն այդ միջոցառումների պարացանկի գերակշիռ մասն են կազմել և տարածված են և նույնական կատարել ժամանակական և քաղաքային միջավայրերում: Այդպիսի պարերից են Կինտառուրին, Լեզգինկան, Կաբարդինկան, Բաղդագյուլին: Շաճախ նույն պարը ներկայացվել է տարբեր անվանումներով՝ Կովկաս, Վրացական լեզգինկա, Լեռնային լեզգինկա և այլն:

Կովկասյան պարերը, հիմնականում, տղամարդկանց մենապարեր են, սակայն փառատոններին դրանց կատարմամբ հանդես են եկել նաև կանայք: Այդ պարերը հատկապես գերակշուն են մանկական պարացանկում,

<sup>1</sup> Ա. Կիլիչյան, Գյումրիի ավանդական պարի բնմականությունը: Շիրակի պատմամշակութային ժառանգությունը, 2, Գյումրի 1996, էջ 69-70:

<sup>2</sup> Հետազայում այլ շրջանների պարային խմբեր ևս փառատոններին ցուցադրեցին ավանդական ծեսեր ու պարեր:

<sup>3</sup> Հրեման Արմանի Արմանական ժամանակական պարագաներ, Ե., 1983, ս. 163.

որոնք նույնպես կատարել են տղաները և աղջկները (աղ. XIX, նկ. 1):<sup>5</sup>

Հետագա տարիներին մանկական պարի խմբերում շարունակվում են կովկասյան պարերի բնմարդությունները. որոնց հաղթական վերջաբանում էր միայն պարզվում, որ ամենաճարպիկ կատարողն աղջրկ է: Նա ունում էր մորթե փափախը՝ երկար վարսերը սփոելով ուսերին (աղ. XVII, նկ. 1):

Կովկասյան պարերի ծագման, տարածման ու բնմական մշակման հարցերին իրենց աշխատություններում անդրադարձել են մի շարք արվեստաբաններ (Կոմիտաս, Սրբ. Լիսիցյան, Ժ. Խաչատրյան, Ն. Սարգսյան):<sup>6</sup>

«Կովկասյան պարեր» անվանումը ավանդաբար կապվում է համբարությունների հետ: Միջնադարից սկսած՝ արհեստավորներն ունեցել են իրենց միությունները, որոնք հայտնի են եղբայրություններ կամ համբարություններ անվամբ՝ ունեցել են իրենց կանոնադրությունն ու դրոշը: Համբարությունների դեկավարները ընտրվել են ընդհանուր ժողովում:<sup>7</sup> Կանոնները կարգավորել են վարպետների, օգնականների ու աշակերտների փոխիհարաբերությունները, տոնակատարությունների անցկացման կարգը և այլ հարցեր: Այդ տոնակատարությունների ժամանակ կատարվել են որոշակի ծիսական արարողություններ, դրանց հետ կապված՝ նաև պարեր, որոնք ունեցել են «սկզբնապես մոգական նպատակառուղվածություն՝ պահպանելու իրենց արտադրության հաջողությունը»:<sup>8</sup> Հետազայում, կորցնելով ծիսական բնույթը՝ վերածվել են ինքույթային, գվարծալի բնույթի պարերի: Եղբայրությունների անդամները, լինելով հայ, վրացի, օս, աբիյազ, հրեա և այլ ազգերի ներկայացուցիչներ, պարերին հաղորդել են իրենց ազգային ոճը, պարագայլը, կատարողական ծեր, որից նոր ստեղծված պարերը դարձել են բազմաոճ և համակովկասյան: Այդպիսի պարերը, կորցնելով ազգային պարագաները, կատարության մեջ առաջանական դարձել են ավանդական պարացաները:

<sup>4</sup> «Ծրագիր ՀՆՍՀ ժողովրդական ստեղծագործության հանրապետական առաջին օլիմպիադայի», Եր., 1987, Յնի, Պարարվեստի արխիվ:

<sup>5</sup> Ժ.Խաչատրյան, Օշկ. աշխ., ՀԱԲ, էջ 27-28:

<sup>6</sup> Վ.Քրդյան, Հայ ազգագրություն, Եր., 1974, էջ 57-58:

<sup>7</sup> Հրեման Արմանի պարագաներ, Ե., 1983, ս. 41:

յին ոճը՝ ծեռք են բերել նոր որակ և ստացել կովկասյան կամ *ասիական* պարեր անվանումը: Ժամանակի ընթացքում դրանք դուրս են եկել համբարությունների շրջանակից և տարածվել կենցաղում, հետագայում մուտք գործելով նաև պարահանդեսներ:

«Դայերը, առավելապես քաղաքացիները, պարում են նույնպես օտար, կովկասյան պարեր՝ նվազարաններով, որովհետև այս պարերը պարերգեր չեն, այլ լոկ պարեղանականներ՝ հարմարեցված մենապարի և գուգապարի, որոնք հայկական չեն», գրում է Կոմիտասը:<sup>1</sup>

Կովկասյան պարերը, լինելով քաղաքային արհեստավորական միջավայրի ծնունդ՝ շատ արագ են տարածվել գյուղերում:<sup>2</sup> Դրանց մասսայականությունը քաղաքներում (Թիֆլիս, Լենինական, Երևան) ոչ միայն ժողովրդի կենցաղում,<sup>3</sup> այլև բեմարվեստում ձևավորեց նոր պարային ժանր՝ կովկասյան մենապարի ժանրը, որն Անդրկովկասում դարձավ ժողովրդական բեմադրական պարի առաջին պրոֆեսիոնալ ժանրը: Արդեն XIX դարի վերջերին այդ ժանրին բնորոշ էին հաստատում կոմպոզիցիոն պատկերները, պարային տարրերի համակարգերի ամրողականությունը, դրա դասավանդման մեթոդիկայի ձևավորումը և պրոֆեսիոնալ կատարողական ավանդությների առկայությունը: Կովկասյան մենապարի ժանրը կայուն տեղ է գրավում հայ համերգային և թատերական բեմերում XIX դարի վերջին և XX դարի սկզբին:

Կովկասյան պարերի տարրերը բեմադրություններ տեղ էին գտնում դրամատիկ ներկայացումներում:

Խորենգրաֆիկ էպիգոնները, որոնք ներառում էին կովկասյան պարերի կատարումներ, հանդիպում էին ինչպես կենցաղային դրամաներում (Ա. Գուրգենբեկյան, «Դաքի Սուլեյման», Գ. Սունդուկյան «Գիշերվա սարը խեր է» և այլն), այնպես էլ պատմական («Մելիքի աղջիկը» ըստ Լեոյի Վկայի, Ռաֆֆու, «Զալաւենդին», «Դավիթ-Բեկ», Գ. Երիցյանի, «Սա-

յաթ-Լովա» և այլն), որոնցում հանգամանորեն վերարտադրվում էին կենցաղի, տոնների, խնջուքների պատկերները և առանձնապես ծեսները:<sup>4</sup>

Կովկասյան պարերի տարածվածությունն են վկայում այդ պարերի ստուդիաները և պարային խմբերը: Դրանք գործել են Թիֆլիսում (Վրաստանի Լուսմունիոնատին կից Կովկասյան պարերի ստուդիա, Վարիչ և դասատու՝ Վ. Արիստակեսյան, 1922թ., «Պարարվեստի թիվ 2 ստուդիա, դեկ.՝ Ի. Արբատով և Կ. Չիվածեն»),<sup>5</sup> Երևանում, Լենինականում:

1930թ. Դոմի-Ռոստովում, դերասան, ազգագրագետ, թարգմանիչ Գ. Գևորգյանը կագմակերպել է Արևելյան երգի ու պարի անսամբլ, որն առաջինն էի Հյուսիսային Կովկասում (գեղ. դեկ. կոմպոզիտոր Ե. Սահառունի):<sup>6</sup> Անսամբլը ծրագրում ունեցել է կովկասյան պարեր:

1935թ. Գ. Գևորգյանը Առողջապահության կազմակերպել է Կովկասյան երգի-պարի ազգագրական անսամբլ, որը Երևար տարիներ գործել է Ռուսաստանում: Մոսկվայի Ֆիլհարմոնիային կից գործել է կովկասյան պարի մեկ ուրիշ անսամբլ. Ս. Նալբանդյանի դեկավարությամբ, որը համերգներով հանդես է եկել Երևանի ֆիլհարմոնիայում (1940-ական թթ.):<sup>7</sup>

Կովկասյան պարի մասին լրացուցիչ տեղեկություններ են տալիս նաև թանակյուսական ու պատկերագրական նյութերը: Դրանցից է: «Ծամիլյա» կամ «Ծամիլի աղոթքը» կոչված պարը:<sup>8</sup> Այն կովկասյան շարքի պարերից պարերից է. այդպես է: կոչվել ի պատիվ Դաղստանի ազգային հերոս Ծամիլի: Ժամանակակիցները նշում են դրա լայն տարածվածությունը հատկապես մանուկների կատարմամբ:

<sup>4</sup> *Հ. Տարկիսյան*, Армянский сценический танец второй половины XIX и начала XX вв. (К синтезу музыки и хореографии). Автореферат диссертации на соискание ученой степени кандидата искусствоведения. Москва, 1992, с. 9-10.

<sup>5</sup> *Ծամիլյառի մասնակիցներ*, Ազգ. աշխ., էջ 16:

<sup>6</sup> *Գ. Գևորգյան*, Ղզար, ԴԱՐ, հ. 10, Եր., 1980, էջ 7:

<sup>7</sup> *Ա. Մազմանյան*, Աշխ., էջ 287:

<sup>8</sup> *Ն. Կիլիչյան*, «Պ. Բուռնազյանի հիշողությունները», Եր., 1987, 7-րդ, պարարվեստի արխիվ:

<sup>1</sup> *Կոմիտաս*, Դայ գեղջուկ պարը, Դորվաճներ և ուսումնասիրություններ, Եր., 1941, էջ 59:

<sup>2</sup> *Հրբ. Լուսաւան*, Հարություն տանց. Հարություն Կավկազ, տ. 2, մ., 1962, ս. 561.

<sup>3</sup> *Օ. Գովազյան*, Դուշեր, Եր., 1957, էջ 73:

«Համբյան» երկմասանր մենապար է. սկսվում է դանդաղ և ավարտվում՝ արագ տեմպով. 4/4 երաժշտական չափով: Առաջին, դանդաղ մասում, աղոթքի թատերականացված տեսարանն է, որը կատարվում է ծնկաչոր: Դիմնականում աշխատում են ծեռքերը, որոնք դամդաղ ու հանդիսավոր բարձրանում են վեր, պայմուիետև տարածվում աջ ու ձախ: Գլուխն ու հայացքը ուղեկցում են շարժմանը: Այս տեսարանն ուղեկցվում է երգով, որի տեքստը ռուսերեն է եղել: Պարի երկրորդ արագ մասը կատարվում է առանց երգը. լեզգինեկայի պարագայլերով:<sup>1</sup> Այն մարտական բնույթ ունի: Երաժշտությունը նույնն է, միայն տեսան է փոխվում: Պարողը կանգնում է՝ մի ծեռքը դաշույնին (եթե չկա՝ գոտկատեղին), մյուսը՝ առաջ ու ետ թափահարելով, շրջանաձև անցում է կատարում: Դասներով կենտրոնին՝ ելման դիրքին, մի քանի կրսանստումներից ու պտույտից հետո պարն ավարտում է հաղորական դիրքով ու բացականչությամբ: Մենապարողին կարող է ուղեկցել խումբը, որը երգում է և ծափահարում:

«Համբյան» կրվկասյան բեմադրական պարի նմուշ է, որը, չնպայած թատերականացված մասի հավելմանը, հիմնականում պահպանել է կրվկասյան պարի ոճական կառուցվածքը:

Կովկասյան պարերի մասին ուշագրավ տևելեկություններ կան պատկերագրության մեջ: Դրանք թիֆլիսահայ գծանկարիչներ Վ. Խոջաբեկյանի,<sup>2</sup> Վ. Լիիբեկյանի<sup>3</sup> և Ս. Ներսիսյանի նկարներն են:<sup>4</sup> Դատկապես ուշագրավ են Վ. Խոջաբեկյանի գծանկարները: Դրանք դարասկզբի թիֆլիսյան կենցաղի, ժողովրդական տոնակատարությունների և արարողություն-

<sup>1</sup> «Համբյա» կամ «Համիլի աղոթքը» պարը ուղեկցվել է ուղարկած երգով (քաղմ. Ն. Կիլիչյան):

На Кавказе есть горы, Кипчаки сидят на них и кают.  
Там танцуют Шамилья, Цинисты и Суимбиса вен ашароут,  
Шамиль бору молится, Суимбис ашароут է ашտоин,  
За свободу борется. Суимбис ашароут պայքарում:  
Дайте, дайте мне коня, Сыбар, тукбар իнан նմույզ  
Золотую финку, Они пыкб դաշույն,  
Я поеду на Кавказ, Ты կаднаш կովкаш.  
Танцевать лезгинку. Тебддигиңиша պարելու:

<sup>2</sup> Ա. Երեմյան, Վանն Խոջաբեկյան, Կյանքն ու արվեստ, (48 գծանկարներով), Վենետիկ, Ս. Ղազար. 1955:

<sup>3</sup> Վ. Լիիբեկյան, Գովք իհն Թիֆլիսին, Եր., 1972:  
<sup>4</sup> Հ. Ստեփանյան, Իսկուսություն, Մ., 1989.

ների բնորոշ արտահայտիչն են: Ազգագրագետն բնորոշ մանրակրկրությամբ Վ. Խոջաբեկյանը պատկերել է արևելյան քաղաքի կենցաղը, խնջույքներն ու տոները: Դրանցից են խոյամարտը, հարսանքը, կնունքը, թաղումը, օժիու: Մասնելը, Բարեկենդանի տոնը, Ղեյնորան և այլն:

Նկարների մի շարքում պատկերված են պարային տեսարաններ՝ «Շուշամբարի», «Լեզգինեկա», «Գաղրականների պարը», «Փեսայի պարը գերեզմանաքարին», «Պար», «Պար «Ուկե հյուրեր» գինետան առաջ» և այլն:

Թիֆլիսը միշտ եղել է բազմազգ ու բազմաբնույթ քաղաք: Տարբեր ազգեր, սոցիալական տարբեր խմբեր, ամենահներնատիպ արհեստներ ու ճարտարապետություն ձևավորել են արևելյան քաղաքի ուրույն դեմքը:

Վ. Խոջաբեկյանի նկարներում պատկերված է Թիֆլիսին բնորոշ սոցիալական որոշակի մի խավի, հայ կինտոնների ու դարաշոխելիների կենցաղը, որոնք շուկայում գրաղվել են արհեստներով ու մանրավաճառությամբ:<sup>5</sup> Վ. Խոջաբեկյանն այնքան վարպետորեն է պատկերել նրանց պարը, որ նկարները թվում են շարժուն և կարծես թե հնարավոր է շարունակել այն ու մասնակող դառնալ պարին: Դրանք հիմնականում տղամարդու մենապարեր են և մի քանի գուգապար:

Զեռքերը մեծ մասամբ շարժման մեջ են ոտքերի հետ միաժամանակ, մի ծեռքը՝ երկրորդ դիրքում, ուսի բարձրությանը հավասար, մլուսն՝ արմունկոց ծալված ուսի վոական գլխավկրուում: Որոշ պատկերներում երկրու ծեռքն էլ երկրորդ դիրքում են, ավելոր դեպի ներքև կամ էլ գլխավերենում՝ ափերը բաց: Ուղերի շարժումները թիջքած բնույթի են, ուժնաթարերի վոա: Ազ կամ ծախս ոտքը մեկրնդեց բարձրանում է՝ ծգված ուժնաթարով ծնկոց ծալված վիճակրում: Բնորոշ են նաև մի ուժնաթարի խաղը և ոտքերի մանրագրայլ շարժումը տեղում: Իրանը ուղիղ է, ուժնաթարի շարժման հետ կարող է մի փոքր թեքվել: Ուսերը կարող են միաժամանակ բարձրանալ և իջնել, նաև ընդգծել ծեռքերի ու

<sup>5</sup> И. Гришашвили, Литературная богема старого Тбилиси, Тбилиси, 1977, с. 13.

ոտքերի շարժումը մի ուսի շեշայով:<sup>1</sup> Գլուխը և հայացքն ուղեկցում են ծեռքերի ու ոտքերի շարժմանը, իսկ եթե զուգապար է, ապա ուղղված են պարզներոջը: «Պատկերված մի քանի գուգապարերը տղամարդու և կնոջ կատարումներ են: Կնոջ ծեռքերը վեր ուրծրացած, մի ծեռքը ափով ներքն՝ երկրորդ դիրքում,<sup>2</sup> ուսի բարձրության, մյուսն արմունկից ծալված՝ քողը բոնած (աղ. XI, նկ.2): Յայացը ներքն է խոնարհված: Իրանի և կոնքի դիրքից այնպիսի տպավորություն է ստեղծվում, թե պարուիհն զուգըներոց առջև նազելի շարժումներով աջ ու ձախ է շարժվում:<sup>3</sup>

Թիֆլիսում եղել են գինետներ (դուքան), որոնք արևելյան նվագախումբ ու պարողներ են ունեցել: Նրանք զվարճացըել են այցելուներին, իսկ հարկ եղած դեպքում նաև ելույթ են ունեցել այլ վայրեցում՝ հանդես գալով որպես շրջիկ-պրօֆեսիոնալ դերասաններ:

Ժողովրդական նվագարաններ են պատկերված Վ. Խոջարեևյանի գրեթե որոյոր նկարներում: «Շուշամրացի»<sup>4</sup> նկարում պատկերված է արևելյան նվագախումբ՝ դիրլչին, զունաչին և դամքաշը: «Լեզգինկա» նկարում պարը կատարվում է դիպլիպիտոյի (փոքր թքուկների գույգ), դափի և փոքրիկ հարմոնի նվագակցությամբ: Վերջիններս կանայք են նվագում, իսկ մի նկարում՝ կինը փոքր երեխայի հետ (աղ. XII, նկ.1): Երաժշտական գործիքներից պատկերված է նաև կինտոներին սյնքան հոգեհարագատ շարմանկան (երգեհոն):

Ըստ Վ. Խոջարեևյանի նկարների՝ կարելի է վերականգնել նաև ժողովրդական տարագը: Ըստ այդ նկարների՝ կինտոները կրում են գոտկատեղից կտրվածք և դարսեր ունեցող արխալուդ, լայն փողքերով շալվար, որն ամփոփվում է երկարածիւք կաշվե կրկնակոշիկների, իսկ հաճախ էլ՝ գուլպաների մեջ:

<sup>1</sup> «Հայոքարելյան», «Լեզգինկա», թ. մատ. 18,4x30,7, Յայասանի պետական պատկերասրահ, Վ. Խոջարեևյան, պրոմ-կատալոգ, Եր., 1979:

<sup>2</sup> Նկատի ունենք պարարվեստում ընդունված ծեռքերի դիրքերի առաջնային, երկրորդ, երրորդ րաժմանումները:

<sup>3</sup> «Հայոքարելյան», «Քեֆ Օրթանալյայում «Ուկե հյուրեր» դուքանում», թ. մատ. 20,5x35:

<sup>4</sup> «Հայոքարելյան», «Շուշամրացի» (1919), թ. Մատ. 19,7x24,5, Յայաստանի պետական պատկերասրահ:

Կինտոները հովհարով գլանարկ կամ էլ ոչխար ու այծի մորթուց փափախ էին դնում, կապում արծաթե գոտի: Ընդունված է եղել նաև դարաշունելիների հագուստին բնորոշ երկար վերնազգեստը՝ չուխան՝ լայնաբերան թեգանիքնեցով ու փամփշտականերով, որոնք ծեական բնույթ ունեին: Կինտոների տարագին բնորոշ պարագաներից էին նաև շղթայով ժամացույցը, գոտուց կախված սրածայր դաշույնը, մեծ նախշազարդ թաշկինակը և այլն:<sup>5</sup>

Թիֆլիսի հայուիհների տարագին բնորոշ էին երկար գգեստները. նրանք մեջքին գոտի էին կրում, որի երկար գույգ ճյուղերը կախված էին զգեստի առջևից: Զգեստի կրծքամասում խոր կտրվածք կար, որը հաճախ ծեավորված էր լինում ժանյակով: Յայուիհները զլիներին քոփի էին դնում, որի վրա ժանեկագարդ, նուրբ գլխաչոր էին գցում: Դրանց տակից երևում էին քունքերին կախված խոպուները:

Թիֆլիսահայոց մեջ ընդունված է եղել գերեզմանոցում մեռելոցի և հարսանիքի օրերին պարելը: Այդ սովորույթը տարածված է եղել նաև Ախալքալաքի, Ախալցխայի շրջաններում և Վասպուրականում: Վ. Խոջարեևյանի մի քանի նկարներ պատկերում են այդ ծիսական արարողությունը:<sup>6</sup> Ըստ նկարի՝ նորակեսան պարել է գերեզմանաքարին՝ հանգույցալի հիշատակը հարգելու, իր նախնիներին առնչվելու նպատակով (աղ. XII, նկ. 2): Վ. Խոջարեևյանի այդ նկարների շարքում պարողը ծեռքին ունի նախշազարդ թաշկինակ, շարժումները և հագուստը նույնն են՝ կովկասյան պարին բնորոշ: Նվագակցում է արևելյան եռյակը:<sup>7</sup>

Կովկասյան պարն ունի եռանաս կառուցվածք՝ մուտք-գարգացում, գագաթնակետ և վերջարան: Մուտքն ու վերջարանը միշտ ունենում են մաժորային տրամադրություն, իսկ միջին մասը, որպես կանոն, ճարպկության, արագաշարժության և հմտության մրցույթ է

<sup>5</sup> Ю.Анчабадзе, Н.Волкова, Старый Тбилиси, М., 1990, с. 66.

<sup>6</sup> «Հայոքարելյան», Ծնողների շիրմի մոտ, հարսանիքի երկրորդ օրը, թ. մատ., 18x23,5 (նվագակած է Յայաստանի պետական պատկերասրահին ՍՄՍ-ի քաղաքացիությունից):

<sup>7</sup> G.Khachatrian, The mythical connection of life and death in "Grave dance". (Abstracts), Innsbruck, 1995, p. 121.

հիշեցնում: Հաճախ այն թատերականացված բնույթ է կրում, որտեղ «դրամատիկ յարվածությունն» ավարտվում է մենապարողի «փայլուն հաղթանակով»: Այն է՝ ատամներով բարձրացնել գետնին ընկած թաշկինակը, ջրով լի սափորը գլխին դրած այնպես պարել, որ չընկնի կամ կատարել դժվարագույն շարժումներ (տրյուկներ), որոնք քերին են հաջողվում:<sup>1</sup> Դրանցից են սրընթաց պտույտները ծնկների վրա, բազմաբնույթ ցատկերը և ոտքերի մատների վրա կատարվող շարժումները: Դրանք հատկապես տարածված են Դաշտանում, Շյուսիսային Կովկասի այլ վայրերում, Վրաստանի լեռնային շրջաններում:<sup>2</sup> Դրանք ոչ մի կապ չունեն դասական պարում ընդունված մատների վրա կանգնելու դիրքի հետ: Դասական պարում դա կանանց պարի շարժում է, իսկ կովկասան պարում՝ միայն տղամարդկանց: Պետք է նշել նաև, որ կովկասյան պար կատարելիս փափուկ ոտնամանը, տվյալ դեպքում կաշվե մույկերը (չուվաքի) բացառում են մատների ծայրերին կանգնելու հնարավորությունը:

Կովկասյան պարի ժամանակ, մատների վրա պարելիս, հենարան են հանդիսանում մատների առաջին ծալված ֆալանգները: Ծնկները և մարմինը պետք է լինեն ծգված, որպեսզի մատների վրա կատարվող շարժումը չխաթարվի:<sup>3</sup>

Կովկասյան պարում հիմնական շեշտը դրված է ոտքերի շարժմանը: Միայն տեխնիկական լավ պատրաստվածությունն ու մշտական կարգություններն են պարզողին հնարավորություն տալիս պահպանելու այդ պարաբայի ոճը:

Չեռքերի շարժումները կտրուկ են, հաճախ՝ ստատիկ ու սահմանափակ, կատարվում են ծեռքերի հիմնական պարային դիրքերի սահմաններում: Մեծ տեղ ունի արտահայտիչ ժեստն ու դիմախաղը (միմիկան), բարձր, մաժորային տրամադրությունն ու աշխույժ,

աըագ տեմպը: Պարն ուղեկցվում է կատարողի և մասնակից-հանդիսատեսի ծափերով ու բացականչություններով:

Կովկասյան պարը մինչև վերջերս էլ պահպանում է կենսունակությունը ոչ միայն կենցաղում, այլև բեմադրական արվեստում՝ ցուցադրվելով ինքնագործ ու արոֆեսիոնալ տարբեր պարային խմբերի համերգներում:<sup>4</sup> Այն փոխանցվում է սերնդեսերունդ, հաճախ ունենալով անհարկի ազդեցություններ հայկական ժողովրդական րենական պարերի վրա, խաթարելով ազգային պարի ոճն անձաշակ միջամտությամբ:<sup>5</sup>

1930-ական թթ. հայ պարարվեստում տարածված էին նաև «Նավաստիների պարերը»: Այն հայ պարային մշակույթ է մտել Ռուսաստանից: Ժամանակին մասսայական ու հանրածանոթ նավաստիական երգերի ուղեկցությամբ պարելու ընդունված էր բեմում: Դրանցից ամենահայտնին «Յարլոչկան» էր: Բեմական մշակումներում այն կատարվում էր ոչ միայն որպես մենապար, այլև խմբական կամ մասսայական պար: Խորհրդային ժամանակաշրջանում նոյնիսկ ծևավորվում էին առանձին խմբեր, որոնք անվանվում էին «Նավաստիների պարի խումբ»: Այդպիսի մի խումբ գործել է Երևանում, Լուսաշխի ակումբում (Դեկ. Է. Մանուկյան, 1937): Հետագայում էլ «Նավաստիների պարերը» կայուն տեղ են ունեցել մանկական խմբերի պարացաներում:

Դրանց բեմական տարածվածությունը կապվում է Ի. Մոհսենի խմբի ծրագրում տեղ գտած, այդ տարիներին հայտնի «Մի օր նավի վրա» մեծակտավ սյուժետային բեմադրության և ռուսական էտրադայում ցուցադրվող նմանատիպ մի շարք բեմադրությունների հետ:<sup>6</sup> Այդ պարերը վերարտադրում էին նավի մեծենայական մասի շարժումները, նավը վա-

<sup>4</sup> Հայտնի են Հայաստանի պարի պետական անսամբլի «Կինտոների պար», «Լեզգինկա» (ըեմ.՝ Վ. Խանամիշլյան):

<sup>5</sup> Ն. Կիլիչյան, Կովկասյան պարերի ազդեցությունը հայ բեմական պարերի վրա, Հանրապետական գիտական նոտաշրժան, նվիրված 1990-94 թթ. ազգագրական և բանագիտական հետազոտությունների արդյունքներին (գեկուցումների հիմնադրույթներ), Եր., 1995, էջ 37:

<sup>6</sup> Հ. Ռերեմետյան, Տառը և էստրադ, Մ., 1985, ս. 96.

<sup>1</sup> Ա. Կիլիչյան, Հարսանիքի նկարագրություն, Եր., 1997, ՀԱԻ, պարարվեստի արխիվ:

<sup>2</sup> Ե. Գևարամած, Օ ուշադիր գործական գործականությունների համար համապատասխան պարային դիրքերի առաջնային առանձնահատկությունները:

<sup>3</sup> Ա. Լոլոխով, Ա. Շորյաև, Ա. Բոչարով, նշվ. աշխ. էջ 122-126:

րելու կամ նավաստիմերի ծառայության հետ կապված որոշ դրվագների: Մյութեստային գիծը պահպանելով հանդերձ՝ որոշ կատարումներ կրում էին երգիծական երանգավորում և նավաստիմերի ճարպկությունն ու ճկունությունը ցուցադրող ընդարձակ հատվածներ (տրյուկների մաս): Այդ պարերը ծևավորվում էին սոցիալիստական մշակույթին բնորոշ մոնումենտալ դեկորացիաներով (պաստառին նկարվում էի մեծ նավ կամ ծով): Պարողները հանդես էին գալիս նավաստիմերի շորերով: Ավելի ուշ շրջանի բեմադրություններում չէի բացառվում նաև աղջկների մասնակցությունը:

1930-ական թվականներին ժողովողական ստեղծագործության ներկայացումներին ոնորոշ է եղել գեղջկական և քաղաքային պարային ֆոլկլորի ցուցադրումը, որոնց խմբերն ու անհատ կատարողները հանդես են եկել տարրեր պարերի կատարմամբ: Ընդ որում՝ քաղաքային լսնդերն ու կատարողները հաճախ ներկայացրել են գեղջկական պարային ֆոլկլոր, իսկ գյուղական խմբերն ու կատարողները՝ քաղաքային: Այս երևույթը թերևս կապված է եղել XX դարի սկզբներին ընթացող ակտիվ քաղաքագոյացման գործընթացների, ընակչության գյուղից քաղաք տեղափոխվելու և այլ գործուների հետ:

Օլիմպիադաների և փառատոնների պարացանկում քիչ չեն եղել նաև ժողովողական պարերգերը (Չեմ, չեմ կրնա խաղա, Դսյ նինար, Ալ աղլուխս, Ապրի գյալին, Անան նանա և այլն), որոնք ընորոշ են եղել գեղջկական միջավայրին:<sup>1</sup> Դրանց րովանդակության մեջ գերակշռող սիրային թեման է, որին միահյուսվում են նաև գյուղական կյանքի հետ առնչվող այլ մոտիվներ՝ ընության գովք, շքապատի նկարագիր, հումորի արտահայտություններ և այլն:

Պարերգերը ծագել ու ժողովողի կենցաղում արմատացել են շատ հին ժամանակներում և իրենց պահպանած ժամանակին ուրույն ավանդույթներով մինչև մեր օրերն են հասել:

Օլիմպիադաներին և փառատոններին ցուցադրված ժողովողական պարերգերը հետագայում մտան ինքնագործ և պրոֆեսիոնալ

պարային խմբերի պարացանկ՝ սկզբնաղյուր դառնալով ավանդական ֆոլկլորի բեմականացման համար: Ժողովողական բեմադրական պարարվեստում ընդգծվեց մի նոր ուղղություն՝ երգի-պարի անսամբլների ստեղծումը, որոնց ծրագրերի հիմքում ժողովրդական պարերգերն էին:

Այդպիսի խմբերից առաջինը 1938թ. Երևանում կազմակերպված Դայկական ժողովողական երգի-պարի պետական անսամբլն էր (հետագայում վերանվանվեց Թ. Ալբունյանի անունով)<sup>2</sup>, որի օրինակով հետագայում Դայաստանում ստեղծվեցին Կալինինոյի շրջանի (1950թ.), Լենինականի գուլպա-տրիկոտաժների ֆարրիկայի (1952թ.), Երևանի աշխատանքային նեգերվների (գեղ. դեկ.) Ե. Ասհառունի, 1955թ.), Կարելի գործարանի (1955թ.), Կիրովականի քիմիական կոմրինատի (1955թ.), Տրիկոտաժի ֆարրիկայի և այլ երգի-պարի համույթները:

Քաղաքային միջավայրում, կովեասյան պարերի հիման վոա, ծևավորվել է յուրահատուկ պարային ֆոլկլոր (արիեստավորական շրջաններում, խնջույքների ու պարահանդեսների ժամանակ նվազախնդերի կատարած պարեղանակների հիման վոա): Քաղաքային ֆոլկլորի հայտնի նմուշներ են Շալախոն, Զուբանի տրնգին, Քյոոողլին, Ագուտին, Ֆորկան և այլն:

1930-ական թթ. Ալավելայայում և Ախալքալաքում կազմակերպված շրջանային օլիմպիադաներին ներկայացվել են այդ պարերը: Որպես հետաքրքիր պարածկ, մրցանակո է արժանացել «Յետ ու առաջ» պարը:<sup>3</sup> Քաղաքներում այն կատարվել է դանդաղ ու հանդիսավոր, գյուղերում՝ արագ ու ցատկերով: «Ագուտին» գյուղերում կատարել են կլոր, փակ շրջանով, իսկ քաղաքում՝ գույգերով: Պարի դեկավար ունենալն այստեղ ևս պարտադիր էր, ինչպես «Յետ ու առաջ» պարում:

«19-ը դ. վ. Վերօնիկին այս պարերը կուել են եվոպական սալոնային պարերի ազդեցությունը: Այդ պատճառով տեղացիք նրանց,

<sup>2</sup> Դ.Խանջյան, Դայկական ժողովողական երգի-պարի պետական վաստակավոր անսամբլ, Եր., 1973, էջ 5:

<sup>3</sup> Ժ.Խաչատրյան, Զավախսի պարերը և նրանց յուրահատկությունները, Լրատեր, 1968, 3, էջ 70-73:

<sup>1</sup> Կոմիտաս, նշվ. աշխ., էջ 17-24:

հատկապես Քյոուզլու և Փոլկայի մասին խոսելիս ասում են՝ «կադրիլ է» (կադրով): Եվրոպական պարերի ուսուցիչները հետևելով իրենց ժամանակի մոդային՝ պահպանել են հայկական պարեղանակները, պարածերն ու ֆիգուրները, մեկընդմեջ վերադասավորելով պարային քայլերը և փոխելով դասավորումները»:<sup>1</sup>

Այսալցիսայի և Ախալքալաքի օլիմպիադաներին ցուցադրություններին ներկայացվել է քաղաքային պարային ֆոլկլոր, այն է՝ գյուղից քաղաք ոերգած պարեր, որոնք քաղաքային միջավայրում կրել են գգալի փոփոխություններ, այդ թվում ենթարկվել եվրոպական սալոնային պարերի ագդեցությանը:

Այսպիսով, այդ շրջանի ժողովրդական ստեղծագործության ցուցադրություններին ներկայացվել են գեղջկական պարային ֆոլկլորի նմուշներ, որոնք գյուղից բերվել են քաղաք և որոշ փոփոխություններից հետո ձեռք բերել քաղաքային ֆոլկլորին բնորոշ գծեր, նաև քաղաքային ֆոլկլորի նմուշներ, որոնք քաղաքից տարվել են գյուղ և այնտեղ տարածվել:

«Քաղաքի ագդեցությունը գգալի է նաև այստեղ: Քաղաքից վերադարձող աշակերտն ու աշակերտուիկին, ուսանողն ու ուսանողուիկին, երիտասարդ բանվորներն ու արհեստավորները գուռնա-թմրուայի հնչյունների տակ պարում են պոլկա, վալս կամ մագուրկա: Իսկ տեղի գեղջկուիկին հավատարիմ է մնում իր հին պարերին»:<sup>2</sup>

Գեղջկական և քաղաքային ֆոլկլորի փոխագիծության ընթացքում կարող են փոխվել ոչ միայն պարածերը, այլև պարերի կատարման բնույթը և տարագը:

«Քաղաքային ավանդույթների ծևավորումը չոչնչացրեց գեղջկական մշակույթի ավանդույթները, որոնք փոփոխվելով՝ երկար ժամանակ գոյատևում են և գյուղում, և քաղաքում»:<sup>3</sup>

1930-ական թթ. պարային մշակույթը բնորոշվում է նաև ժամանակագրությամբ:

<sup>1</sup> Ժ.Խաչատրյան. Աշխատանք. Եղվածք. աշխ. ՀԱՐ, էջ 59-68:

<sup>2</sup> Սովորական. Լեռնային նարարարի հայերը, ՀԱՐ, հ. 12, Եր., 1981, էջ 77:

<sup>3</sup> Ա.Զեմցովսկի, Նարодная музыка и современность, Современность и фольклор, М., 1977, с. 42.

Յիմնականում առանձնացել են աշխատանքային, ռագմական, կենցաղային, երգիծական և մնջախաղային-ննանողական պարային ժամբերը:

Աշխատանքային պարերը վաղնջական ժագում ունեն և րնորոշ են շատ ժողովուրդների պարային մշակույթներին: Նման պարերը ունեն նաև ծիսական բնույթ, եզր նմանողական գործողություններով ու հմայելով, փորձել են հասնել ցանկալի արդյունքի: Այդ պարերում ութմիկ ու պլաստիկ շարժումների միջոցով վերարտադրվում են աշխատանքային տարրեր գործողությունները: Ամեն ժողովուրդը ունի իր կենսաձևին բնորոշ աշխատանքային պարեր, հնձվողի պար՝ լատիշներինը, եգիպտացորենի պար՝ մոլորացիներինը, փայտահասի պար՝ գուցուլներինը և այլն: Բելոռուսական պարային ֆոլկլորում տարածված է «Լենոկ» պարը, որում պարողները ցուցադրում են, թե ինչպես են ցանում վուշը, հավաքում և հումքը մշակում:<sup>4</sup>

Յայկական ժողովրդական պարաֆոնդին նույնպես բնորոշ են աշխատանքային պարերը, որոնցից այդ ժամանակաշրջանում տարածված են եղել՝ Մանած-գզած, Քրողանկըզի, Բուլուլ, Շուտ-շուտ արա, Կրնկի, Զանիման, Քեչեն վրեն, Բրուտի պարը, Դրնգո, Եկեք ծեծենք ստխն ի սխտոր, Ունուս, Շալի, Ղասար Աղասի և այլն: Վերջինս կատարում են տղամարդիկ՝ նմանակելով մսագործի դանակով կատարվող շարժումներին, այն սրելում:<sup>5</sup>

Այս պարերգերն ու պարերը որոշակի կառուցվածք ունեն: Դրանց հիմքում պարզ պարագայլն է, որն ընդմիջում է աշխատանքային որևէ գործողություն ներկայացնող մնջախաղային դրվագով:

«Կանայք, կանգնելով որոշ հեռավորության վրա, իրար հետևից շարժվում են դեպի առաջ, ձեռքերը թեթև շարժումներով տարածելով աջ ու ձախ կողմերը, ապա աջ ուտքը սահեցնելով առաջ՝ միացնում են ձախը, հետո ձախն առաջ տանելով՝ նույն ձևով միաց-

<sup>4</sup> Г. Иноземцева, Народный танец, М., 1971, с. 19.

<sup>5</sup> Է.Петրոսյան, Ջ.Խաչատրյան, Արмянский народный танец, с. 24.

նում են աջը՝ նույնը չորս անգամ կրկնելով։ Փոխվում է մեղեղին, որից հետո բոլորը կիսանիստ դիրքում սկսում են ծափ տալ ու կատարել աշխատանքային որևէ գործողություն։ Դրան դարձյալ հետևում է ծափը։ Հետո վեր են կենում ու սկսում նորից պարել։ Եվ յուրաքանչյուր անգամ կոկեռության ժամանակ կատարում են տարբեր աշխատանքային գործողություններ, վերջում արագ տեմպով պարում են շուրջպար՝ ծափ տալով։ ապա պարավայրից պարելով հեռանում։<sup>1</sup>

Սա կանանց Կրնկի պարի բեմադրական նկարագրությունն է, որում վերարտադրվում են թշուններին նմանակող շարժումներ և աշխատանքային մի քանի պահեր՝ բուրդ լվանալ, գգել, մանել և այլն (քեմ՝ Վ. Աբիստակեսյանի)։

Նույն սկզբունքով են կառուցված նաև Եկեղ ծեծենք սոլին ի սխտոր,<sup>2</sup> Քըրդան կրգի աշխատանքային պարերգերը, որտեղ վերը նշված կառուցվածքին համապատասխան, պարողները նմանակում են այն աշխատանքային գործողությունները, որոնց մասին երգում են։<sup>3</sup>

Աշխատանքային պարերն ըստ բովանդակության լինում են երկու տեսակ՝

ա) Կանանց պարեր, որոնք վերարտադրում են տնային աշխատանքի պահեր։ դրանցից են Կրնկին, Քըրդան կրգին, Ծալին, Քեչեն վլեն, Մանած-գգածը, որոնց հիմնական թեման բբի մշակումն է, մանածագործությունն իր բոլոր մանրամասներով։ Եթե Ծալի պարում ցուցադրվում է, թե ինչպես են լվանում, գգում, սանրում բուրդը, չորացնում և ծգում հաստոցին ու շալ գործում, ապա լենինականան Քեչեն վլեն աշխատանքային պարում նմանակում են թաղիքի (քեչա) սեղմումն ու տասփանումը ուժքերով։<sup>4</sup>

«Թե ինչպես և որտեղ կարելի է մտցնել աշխատանքային շարժումները՝ ժողովողական պարերի մեջ՝ դրա պերճսխոս նմուշը տվեց օլիմպիադում Ալահվերդու շրջանի Սամածգգածը պարը։ Այս պարը պետք է համարել օլիմպիադի ամենաարժեքավոր նյութերից մեկը։ Պարուիի Օվսաննա Քալայանը ստացել է առաջին մրցանակ։ Այդ պարի մեջ գեղեցիկ ռիթմին ենթարկված ծևով րացվեց մանվածքի պատմությունը՝ սկսած բուրդ գգելուց և մանելուց, մինչև դագգահի վուա գործելը, շոր ծևելն ու կարելը։ Դա մի մեծ մնջախաղային բազմաբովանդակ մենախոսություն է», գրում է Սրբ. Լիսիցյանը։<sup>5</sup>

բ) Պարեր, որոնք վերարտադրում են դաշտային գյուղատնտեսական աշխատանքային պահեր և հիմնականում խառը խմբական են (Ունուս, Շուտ-շուտ արա, Զանիման, Բուլու և այլն)։

Բուլու նշանակում է խոտի խուրձ։ Պարն ըստ բուլանդակության աշխատանքային է և նկարագրում է խոտ հավաքելու ու կապելու գործողություն, որի ընթացքում պարողներն անվերջ առաջ ու ետ են շարժվում։<sup>6</sup>

Դայ պարարվեստի բնագավառում հետագայում աշխատանքի թեման ավելի լայն տարածում ստացավ։ Աշխատանքային պարեր սկսեցին բեմադրվել ինքնագործ ու պրոֆեսիոնալ պարի շատ խմբերում, որոնցում ոչ միայն թեմական մշակման էր ենթարկվում ժողովողական պարային ֆոլկլորը, այլև ստեղծվում էին նոր սյուժետային պարեր (Այգեքաղ, Զկնորսների պար, Խիկներով պար, Այումինագործների պար, Կոլտսնտեսային և այլն)։

Ժողովուրդների պարային ֆոլկլորի հնագույն շերտին են պատկանում նաև ռազմական պարերը։<sup>7</sup> Դրանց հիմքում ռազմի տարբեր տեսարանների պատկերումն է։

Դրանք պարել են ճակատանարտերից առաջ՝ հաջողություն ապահովելու ակնկալիքով և հետո՝ որպես հաղթական պար։

Պարել են նաև թաղման արարողությունների ժամանակ, հատկապես այն դեպքերում,

<sup>1</sup> Վ.Արիստակեսյան, Դայ ժողովողական պարերի խորեոգրաֆիկ ստուդիան, Յոկտեմբեր-նոյեմբեր Տարեգիրք, 1932թ. էջ 291-293։

<sup>2</sup> Հր.Լիսիցյան, Արմանական պարերի մասին պատմություն, Ե., 1983, ս. 202-203.

<sup>3</sup> Է.Պետրօսյան, Ջ.Խաչատրյան, Собирание произведений армянского танцевального и театрального фольклора, Советская этнография, М., 1965, с. 156.

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 25։

<sup>5</sup> Սրբ. Լիսիցյան, նշվ. հողված, էջ 11։

<sup>6</sup> Ժ.Խաչատրյան, նշվ. աշխ., ՅԱԲ, էջ 63։

<sup>7</sup> Հր.Լիսիցյան, Արմանական պարերի մասին պատմություն, Ե., 1983, ս. 81։

Երբ հանգուցյալը կապ է ունեցել ռազմական գործի հետ:

Ռազմական պարեր կատարվել են նաև հարսանեկան արարողությունների ընթացքում և վերջում:<sup>1</sup> Այդ պարերի ժամանակ սկզբնական շրջանում կատարողները զինված են եղել թրերով, նիզակներով, վահաններով և այլն.<sup>2</sup> Հետագայում դրանք շատ տեղերում փոխարինվել են փայտերով:

1930-ական թթ. համերգային ծրագրերում հանդիպում են հետևյալ ռազմական պարերը՝ Յար-Խուչտա, Քերծի, Սլևան, Թրախսաղ, Մըշու-Խըռ, Կոխ և այլն:

Կոխ պարում պարային ռիթմիկ շարժումների միջոցով վերարտաղվում է ընթամարտի տեսարան:<sup>3</sup> Կոխ խաղ-մրցույթն ունեցել է մարմնամարգական ունակությունները գարգացնելու գործառույթ: Աերաստիայում մենամարտողները մրցել են նույնիսկ ծմունք, մինչև գոտևկատեղը մերկացած:

Դասարակական վայրերում մենամարտը տեղի է ունեցել գուրնա-դիոլի նվազակցությամբ: Տարածված են եղել նաև հարսանեկան գոտեմարտեր: Կոխը մեծ մասամբ տեղի է ունեցել Բարեկենդանի և Զատկի օրերին:<sup>4</sup>

Այդ մենամարտը պատկերող պարը հաճախ է կատարվել ժողովրդական ստեղծագործության ցուցադրություններին և մասսայականություն է ունեցել: Դրա կատարմամբ հատկապես աչքի են ընկել դսեղցիները:

Կոխ պարը գուգապար է, որտեղ երկու մենամարտիկ-պարող երաժշտական ոիթմին առնթեր, պարային շարժումներով պատկերում են մենամարտի սկիզբը (ձեռքսեղմում և ոդջույն), ընթացքը, որի ժամանակ կարծես հավասար պայքար է ընթանում և մենամարտի ավարտը, որտեղ կողմերից մեկը հաղթում է, իր թե գետնելով մյուսին: Ժողովրդական բեմական պարարվեստի հետագա շրջաններում շարունակվում են Կոխ պարի բազմաբնույթ

թեմականացումները: Այն տարբեր մեկնաբանություններ է ունենում ինքնագործ և պրոֆեսիոնալ պարի խմբերում:<sup>5</sup>

Դաջորդ պարային ժամր կենցաղային պարերն են: Դրանք առօրյա կենցաղում տարածում գտած պարեր են, որոնք կատարվում են տարբեր առիթներով՝ ընտանեկան հավաքներին, ժողովրդական տոնախմբությունների, խնջույքների, հարսանիքների ժամանակ և հիմնականում աշխայժ բնույթի են, ցույց են տալիս պարողի ճարպկությունը, արագաշարժությունը, դժվար պարային շարժումներ կատարելու ընդունակությունը: Այդպիսի պարերից են Կովկասյան պարերը, Շալախոն, Զուռնա տրնգին և այլն:

Դիմնականում անհատ կատարողները օլիմպիադաներին րեմից ցուցադրել են այդ ժամրի մի շարք մենապարեր, որոնց թվում՝ նաև երգիծական բովանդակությամբ կատարումներ: Այդպիսի պարերի կատարմամբ աչքի են ընկել հատկապես Լենինականի պարային խմբերը (Թոփիալ Ջայկովի պարը, Օխտոր քյոշանի տրնգի, Տույ-Տույ, Խմրապետ Մկո և այլն):

Դայ ժողովրդական պարարվեստը հարուստ է մնջաղախային-նմանողական պարերով: Այդ պարերը հնագույն ծագում ունեն, եղբ մարդիկ ինչ-որ աղերս էին տեսնում մարդու և կենդանական կամ րուսական որոշ տեսակների միջև:<sup>6</sup> Երկրպագելով տոտեմ նախահայրերին՝ նրանք ծիսական պարերում նմանակում էին այդ տոտեմ նախատիպերին: Մեզ են հասել մնջաղախային նմանողական բնույթի մի շարք պարեր, որոնք նվիրված են եղել տոտեմներին: Դրանցից են կենդանիներին, թռչուններին և ծառերին նմանակող պարերը (Արջապար, Կոնգավեն, Խագ-Խագ, Նոնի, Խնկի ծառ և այլն):

Կենդանիների կերպարներ տեսնում ենք ժողովրդական տոնական (Նոր տարի, Բարեկենդան, Մեծ պաս, հարսանիք) ներկայացումների ժամանակ, սյուժեին համապատաս-

<sup>1</sup> Հ. Խաչատրյան, Традиционные свадебные пляски армян, Советская этнография, 1975, 2, с. 87-93.

<sup>2</sup> Zh. Khachatryan, War-Dancer among Armenians, Budapest, p. 401-405.

<sup>3</sup> Ծրբ. Լուսաւան, նույն տեղում, էջ 67-68:

<sup>4</sup> Վ. Քրդյան, Դայ ժողովրդական խաղեր, հ. 2, Եր., 1980, 1980, էջ 73-84:

<sup>5</sup> «Կոխ պար», մենակատարներ հանրապետության վաստակվոր արտիստներ՝ Վ. Ռաշիջյան, Ա. Կարապետյան (Հայաստանի երգի-պարի պետական անսամբլ, 1950-ական թթ., բեմադրությունը՝ Է. Մանուկյան):

<sup>6</sup> Խ. Սամուելյան, Դիմ Հայաստանի կուլտուրան, հ. 1, Եր., 1931, էջ 169:

խան հանդերձավորամբ և պարերով:<sup>1</sup> Այդ-պիսի պարերից է Դամշենի Արջապարը, որը կապված է արջ տոտեմի պաշտամունքի հետ: Այդ գործողությունները սրբագան էին, կատարվում էին մեծահասակների կողմից: Դետագյում, կորցմելով մոգական նշանակությունը, նման պարերը ստանում են այլ րուվանդակություն, բայց փոխանցվում են սերնդեսերունք:<sup>2</sup>

Ժողովրդական պարարվեստում շատ պարեր կան, որոնք պատկերում են թռչուններին, նրանց բնորոշ շարժումները: Շատախի Կոնզավեն պարում նմանակում են կոունկների շարժմանը, Ալաշկերտի Խազ-Խազում՝ սագերին, Էրգրումի Թավուխ պարում՝ հավերին և այլն: Դրանք խմբական պարեր են, որոնցում պարային շարժումներով վերարտադրվում են այդ թռչունների վիսգըք, թոիչըք, բույն հյուսելը, ջուր խմելը և այլն:<sup>3</sup> Պատկերվում է երկու կերպար՝ առաջնորդի և երամի կամ՝ մոր և ծագերի:

Զոփի մնջախւսդային կատակ պարը պարել են տղամարդիկ, կիսաշրջանով կանգնած դեմ դիմաց: Նրանց ծեռքերին ուռենու շիվեր են եղել, որ ճկած պահել են գլխավերենում: Այստեղ առկա է նաև բազմաթիվ ժողովուրդներին հատուկ այն հնավասնող սովորություն, երր կանանց դերը թատերականացված ժողովրդական ներկայացումներում տղամարդիկ են կատարել: Զուռնայի և դիոլի նվազակցությամբ մասնակիցները պարել են պարագիսի՝ «մոր» դեկսվարությամբ, կրկնելով նրա շարժումները: Եթե որևէ մեկն ուշացնում է կրկնել «մոր» շարժումները, պարողները հարվածում են նրան շիվերով: Մայրը կամաց կամաց հանում է հագուստները: Պարողները կրկնելով նրա շարժումները, նույնպես մերկանում են: Զոփի պարը կատարվել է Բարեկենդանի և հարսանիքների ժամանակ, երր արարողությունները նվիրվում էին պտղաբերությանը և ամուսնական գույզի արգասավո-

րությանը: Կան նաև այլ շուրջպատճեր աստիճանաբար հանվելու արարողությամբ՝ Ծամթել, Չեմ-չեմ կրնա խաղա, Կոնգեցուկ, Ղազղազ և այլն:<sup>4</sup>

Օառերի պաշտամունքին նվիրված պարերից տվյալ ժամանակաշրջանում կանայք կատարել են Խնկի ծառ, Նոնի, Ծիրանի լիրիկական մենապարերը, որոնցում ծեղքերի շարժումներով նմանակել են ծառի ճյուղերի և տերևների, իսկ հրանի շարժումներով՝ բնի տատանումները:<sup>5</sup>

1930-ական թթ. ձևավորվում է նաև մանկական պարային մշակույթը: Դպրոցներում, մշակույթի տներում, ակումբներում կազմակերպվում են մանկական պարի խմբեր: Երեխաները մասնակցում են ոչ միայն ժողովրդական ստեղծագործության ցուցադրումներին, այլև իրենց համար հատուկ կազմակերպված օլիմպիադաներին ու փառատոններին (Շնորհալի երեխաների օլիմպիադա, 1935թ., Երջանիկ մանուկների օլիմսիադա, 1939թ., Պիոներ-դպրոցականների արվեստի հանրապետական օլիմպիադա, 1941թ. և այլն):

Մենապարերով հանդես եկողների թիվը գերազանցում էր խմբական պարերին և գուգապարերին, որոնք հիմնականում կովկասյան պարեր էին: Խնչակ նշում է Արք. Լիսիցյանը, մանուկները հիմնականում հանդես էին գալիս ոչ թե մանկական պարերի կատարմամբ, այլ նմանակում էին մեծերին:<sup>6</sup>

Այդ շրջանում դեռ տարածված էի տնայնագործությունը, և զյուղերից ու շրջաններից եկողները դեռ պարում էին իրենց տարազներով: Խսկ քաղաքի խմբերն արդեն հագնում էին նորած կտորներից կարված, ղրվագված միանման հագուստներ: Դետագյում, երբ վերացավ տնայնագործությունը, և կենցաղը զգալի փոփոխությունների ենթարկվեց, լուրջ խարարումներ տեղի ունեցան ժողովրդական բեմադրական տարազներում: Պարային խմբերի

<sup>1</sup> Յ.Պետրոսյան, Образы животных в Армянском народном театре, Советская этнография, 1974, 5, с. 131-137.

<sup>2</sup> Յ.Պետրոսյան, Ջ.Խաչատրյան, նշվ. հոդված, էջ 155-158:

<sup>3</sup> Ծրբ. Լիսիցյան, նշվ. աշխ., հ. 1, էջ 245, ժ. Խաչատրյան, Դամշենի մի քասր պարերը, Տեղեկագիր, 1964, 3, էջ 73-75:

<sup>4</sup> Է. Պետրոսյան, Թատերային տարրերը միջնադարյան մանրամկարներում, Պայկական արվեստ, Եր., հ. 1, 1974, էջ 165-166:

<sup>5</sup> «Ծիրանի ծառ» պարը «Բարեկամություն» պարի պետական եամույթում (թեմ. Ն. Սեհրաբյանի, 1990-ական թթ.):

<sup>6</sup> Արք. Լիսիցյան, նշվ. հոդված, էջ 10:

համար սկսեցին կարվել այնպիսի ոճավորված հագուստներ, որոնք ավելի ու ավելի էին հեռանում ազգային նախատիպից:

Պարային մշակույթի այդ շրջանը (1930-ական թթ.) բնօրոշվում է որպես ժողովրդական պարային ինքնագործունեության ձևավորման շրջան, որը հետագայում լայն ծավալում է ստանում: Ինքնագործ պարարվեստը տարեցտարի ծաղկում է Հայաստանում՝ ծեռքբերելով նոր դրսերումներ և որակներ:

Դայ ժողովրդական պարարվեստի համար դա նաև այն շրջանն է, երբ սկսվում է ժողովրդական պարի պրոֆեսիոնալ բեմականացման գործընթացը: 1938թ. ստեղծվում է Հայկական ժողովրդական երգի-պարի անսամբլը (գեղ. դեկ.՝ Թ. Ալբունյան, բալետմայստեր՝ Ե. Մանուկյան, գործիքային մասի դեկ.՝ Ա. Ալեքսանդրյան), (աղ. XXIII, նկ. 2):<sup>1</sup>

Ժամանակի պարային մշակույթը իր բնորոշ ռառանձնահատկություններով ու ժամրային բազմազանությամբ առանձին շրջափուլ հանդիսացավ հայ պարարվեստում: Ժողովրդական արվեստի ցուցադրությունները արժեքավոր էին, քանի որ ներկայացնում էին ժամանակի պարային մշակույթն ամբողջությամբ՝ սկսած կենցաղային տարրեր պարերից մինչև բեմադրական պարերը: Այդ միջոցառումների ժամանակ կարելի է տեսնել ազգային ֆոլկլորի անադարտ նմուշներ, որոնք այդ կերպ փրկվեցին մոռացումից: Հատկապես տարեցները բեմից ցուցադրում էին ազգային ինքնատիպ պարեր:

Փառատոնները մեծ նշանակություն են ունեցել ոչ միայն ազգային պարի պահպանման, այլև սերնդեսերունդ փոխանցելու նկատումնով: Երեխանների մասնակցությունը նման միջոցառումներին նպաստում էի ազգային ավանդական մշակույթի գոյատևմանը:

Ժողովրդական ստեղծագործության ցուցադրումները նպաստել են ոչ միայն ազգային պարային ֆոլկլորի պահպանմանը, այլև ընթացք են տվել դրա նորովի ձևավորմանն ու զարգացմանը, նաև բազմաթիվ պարի խմբե-

րի կազմակերպմանը, որը դրական է պարային մշակույթի համար:<sup>2</sup>

Դայտնի են օրինակներ, եթե ժողովրդական ստեղծագործության այդպիսի միջոցառումներին ցուցադրված պարերը հետագայում մեծ ժողովրդականություն են ստացել, նաև մտել ինքնագործ ու պրոֆեսիոնալ պարի խմբերի խաղացանկ: Այդպիսիք շատ էին Հայկական ժողովրդական երգի-պարի պետական և Հայաստանի պետական ջագ-նվազախմբի պարացանկում՝ (Ֆոռկա, Կոխ պար, Այգեքաղ, Ուզունղարա, Ծափ պար, Սևանի, Չեմ-չեմ կրնա խաղա, Շալախո, Լեզզինկա, Ղազախի, Բաղրազյուի, Ղարարաղ, Կինտառի և այլն), (աղ. XXIII, նկ. 1):

Այդ ցուցադրությունները առատ նյութ էին տալիս պարային ֆոլկլորով գրադվող մասնագետներին, ինքնագործ ու պրոֆեսիոնալ պարային խմբերի բեմադրիչներին: Դրանք ոչ միայն ժողովրդական պարի ցուցադրումներ էին, այլև անհատ կատարողների և պարային խմբերի յուրօրինակ պարամոցումներ, որոնք նպաստում էին արվեստի այս ճյուղի գաղգացմանը:

Պետք է նշել, որ այդ միջոցառումները որոշ դեպքերում նաև բացասական հետևանքներ են ունեցել, որոնցից էին բանահյուսական մաքուր հենքի աղավաղումները, խորհրդային միջինացված կադապարին հազմարեցնելը և այլն:

Այնուամենայնիվ, նշանակալից է եղել դրանց դերը հասարակական կյանքում: Ժողովրդական ստեղծագործության ցուցադրություններին պարարվեստի առկայությունը ձևավորել է ոչ միայն հանդիսատեսի գեղագիտական ճաշակը, այլև նոր դրսերումներով հարստացրել պարարվեստը, ցույց տալով, որ ժողովրդական պարը անսպառ աղբյուր է բեմադրական պարի համար:

<sup>1</sup> А.Пахлеванян, О роли народного творчества в музыкальной культуре Советской Армении, Музыкальная культура Арм. ССР. М., 1985, с. 388-390.

<sup>2</sup> Т. Устинова, Звездный хоровод, М., 1964, с. 5-8.